

ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ ՇՆՈՐՀԱԽՐԱԳՐԵՐ ՍՏԱՅԱԼ ԵՒ ԱՌԱՔԵՅ՝ ՌԱՄՏԱՆԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Ռամատանի ամսուան ամիթով շնորհաւորագրեր ստացաւ արաբական եւ իսլամական պետութիւններու ղեկավարներէ եւ նախագահներէ, որոնք նախագահ Ասատին քաջառողջութիւն եւ Սուրիոյ ժողովուրդին բարգաւաճ օրեր մաղթեցին:



Իր կարգին նախագահ Ասատ շնորհաւորագրեր առաջեց արաբական եւ իսլամական պետութիւններու ղեկավարներուն եւ նախագահներուն, յայտնելով իր բարեմաղթութիւնները անոնց:

Նախագահ Ասատին շնորհաւորագրեր յղեցին Սեւտական Արաբիոյ թագաւոր Սալման պըն Ալալը Ազիզ ալ-Սաուտ, Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահ Մուհամմետ պըն Չայետ ալ-Նահեան, Օմանի Սուլթանութեան սուլթան Յայսամ պըն Թարեք, Պահրէյնի թագաւոր Յամատ պըն Իսա ալ-Խալիֆա, Ալճերիոյ նախագահ Ալալը Մաճիտ Թապայուն, Եգիպտոսի նախագահ Ալալը Ֆաթթահ ա-Սիսի, Պաղեստինի նախագահ Մահմուտ Ապպաս եւ Ուզպեքիստանի նախագահ Շաւքաթ Մերտիաիֆ:

ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ ՀԱՆԴԻՊԵՅԱԼ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՖԻԼՄԱՆԻՄԱՐԶԻ ԽՈՒՄԲ ՄԸ ԱՍՏԳԵՐՈՒ ԶԵՏ

Կիրակի 10 Մարտին, Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հանդիպում ունեցաւ սուրիացի խումբ մը վաստակաւոր դերասաններու եւ բեմադրիչներու հետ:



Յանդիպման ընթացքին զրոյց ծաւալեցաւ թատերախաղի արտադրութեան, դիմագրուած մարտահրաւերներուն, բնագրերուն, նկարահանումներուն եւ ընկերութեան մէջ թատերախաղերու դերակատարութեան եւ յառաջիկային անոնց արտադրութեան նեցուկ կանգնելու միջոցներուն շուրջ:

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՏԱԽՈՒՇԵՆ ՍԿՍԻԼ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ, ԹԵ ՓԱՇԻՆԵԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ԲԱՆԻ ՄԸ ԳԻՂ ՅԱՆՉԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ»

Սահմանազատումը պետք է սկսիլ ոչ թէ Տաւուշի մարզէն, այլ՝ Վայոց ձորէն, ուր մխրճուած են ատրպէյճանական զինուած ուժերը: Factor TV-ի հետ զրոյցի ընթացքին նման կարծիք յայտնեց ԶՅԴ անդամ, ԱԺ «Յայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեան՝ անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինեանի այն յայտարարութեան, թէ չի բացառուիր, որ սահմանազատման գործընթացը պետք է սկսիլ Տաւուշի մարզէն:



Ընդդիմադիր պատգամաւորին դիտարկումով՝ սահմանազատումը Տաւուշէն սկսիլ կը նշանակէ, որ Փաշինեան կը պատրաստուի քանի մը գիւղ յանձնել:

«Սահմանազատումը սկսիլ Տաւուշէն, Փաշինեան քողարկուած կ'ընէ՝ 4 գիւղ հիմա կու տամ, յետոյ մնացած 4-ին հարցերը կը քննարկենք: Ատրպէյճան Յայաստանէն 8 գիւղ կը պահանջէ, իսօքը անոնց մասին է», տեսակետ յայտնեց Խաչատրեան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՉՈՒԱՐԹՆՈՅ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՀՈԳԵԹՈՎ ՊԱՅԵՐ ՊԱՐԳԵԿԵՅ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան «Չուարթնոց» Երգչ. Միաւորի Վարչութեան, Կիրակի, 10 Մարտին «Չուարթնոց»-ը բեմ բարձրացաւ ընտրեալ երգերով, ճոխ յայտագիրով ու երաժշտական գանձարանի արժէքներով ջերմացուց հալէպահայ հանդիսատեսին սիրտն ու հոգին, վաստակաւոր խմբավար



մայսթրա Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի խմբավարութեամբ եւ Նոյնքան վաստակ ու ծառայութիւն ունեցող դաշնակահար Լիզա Սէրայտարեան-Աւընեանի դաշնամուրի ընկերակցութեամբ:

Համերգը, որ տեղի ունեցաւ «Գ. Եսայեան» սրահին մէջ, կը վայելէր ներկայութիւնը Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդի ներկայացուցիչ Տէր Կոմիտաս Ա. Զահանայ Տատաղլեանի, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքապետ Վերապատուելի



Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխան Ժորայր Ռէիսեանի, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան խորհրդական Դաւիթ Թաղետեանի, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան 14-րդ խումբի հրամանատար Դաւիթ Յարութիւնեանի, Պատ-

կան Մարմինի, ՀՄԸՄ-ի եւ ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեանց, Համազգայինի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչներու, հայր սուրբերու, Ազգ. Վարչութեան, մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներու եւ երաժշտասեր հանդիսականներու:

Հայերէն եւ արաբերէն բացման խօսքերով Սարգիս Սարգիսեան ըսաւ, որ Համազգայինի «Չուարթնոց» երգչախումբը եղած է այն օջախը, ուր վառ պահուած է հայ երաժշտութեան բոցը: Այսօր, հակառակ երկրի դիմագրուած դժուարութիւններուն, «Չուարթնոց» երգչախումբը կը ջանայ խտացնել իր շարքերը՝ այն խոր համոզումով որ հանդիսատեսը իր առօրեայ մտահոգութիւնները մէկդի դրած սրտի զեղումով պիտի ըմբռնէ մեկ-նաբանուած դասական ու ժողովրդային երգերը: Ապա ան շնորհակալութիւն յայտնեց խմբավարին, դաշնակահարին եւ երգչախումբի անխոնջ երգողներուն, որոնք, կենցաղային ծանր պայմաններու մէջ ապրելով մէկտեղ, փորձերու մշտական ներկայութեամբ յաջողեցան բեմ բարձրանալ:

Ապա խումբը քառաձայն երգեցողութեամբ ներկայացուց դասական եւ ժողովրդային հայկական եւ օտար երգերէ բաղկացած երկբաժին յայտագիր մը:

Առաջին բաժինով ներկայացուցեցան հետեւեալ երգերը՝ «Օրհներգ», Վահէ Շարաֆեան, «Ով Հայոց Աշխարհ», Մակար Եկմալեան, «Խմբերգ այնին Շարք», Գրիգոր Սիւնի, «Երեւան Երեբունի», Էտկար Յովհաննեսեան, «Հին-կալլա», մշակում՝ Թաթուլ Ալթունեան, «Խմբերգ այնին Շարք», Կոմիտաս, «Կունկ, Բարով Դառնաս», Ալեքսէյ Յեքիմեան:

Յայտագրի երկրորդ բաժինով հանդիսատեսը վայելեց հետեւեալ երգերու խմբերգային կատարումը՝ «Հալէպեան Ֆոլքլորային Երգերու Շարք»,

Թղթակից
 Շարք. Էջ 12 ➤

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԹԵՐՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ շաբաթ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեանի եւ արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեանի գլխավորութեամբ հայկական երկու պատուիրակութիւններու Իրան այցելութեան ընթացքին, Իրանի գինուորական գերատեսչութեան ղեկավար Մուհամմետ Ռըզա Ղարայի, ապա Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիի ուղերձները կ'ուրուագծէին թէ՛ Իրանի մօտեցումները Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն հարցով եւ թէ՛ Իրանի տարածաշրջանային ռազմավարութիւնը:

Իրանի պետական այրերը կը շեշտէին, որ Իրան մեծ կարելութիւն կու տայ Հայաստանի հետ յարաբերութիւններուն եւ անխախտ կը պահէ դրացի բոլոր երկիրներուն հետ յարաբերութիւններու ամրապնդման գծով արտաքին իր քաղաքականութեան հիմնական սկզբունքը:

Հանդիպումներուն ընթացքին հնչած խօսքերուն մէջ Իրանի ուղերձները յստակ էին.

Առաջինը Իրանի վճռական դիրքորոշումն էր աջակցելու տարածաշրջանի երկիրներու տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան եւ միջազգայնօրէն ճանչցուած սահմաններու անխախտ պահպանման:

Այստեղ Իրան իր գորակցութիւնը կը յայտնէր Հայաստանի սահմաններու պաշտպանութեան, անուղղակիօրէն կը դատապարտէր Հայաստանի օրինական տարածքներ ներխուժած ատրպէյճանական ուժերը, միեւնոյն ատեն զգոնութիւն յայտնելով Իրանի տարածքային ամբողջականութեան սպառնալիք համարուող ատրպէյճանա-խրայելեան գործունին նկատմամբ: Ատրպէյճանի համար եւս նպաստաւոր կը հնչէ տարածքային ամբողջականութեան թեզը, Արցախի հարցը մէկընդմիջտ ուրացման մատնելու Պաքուի քաղաքականութեան դիտանկիւնէն:

Երկրորդ. Իրան կ'ընդգծէր, որ կովկասեան տարածաշրջանին մէջ հաւատարիմ կը մնայ իր քաղաքականութեան, միաժամանակ կ'աջակցի Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ ուղղակի կապերուն: Ուղղակի կապերը խրախուսելի են Իրանի կողմէ, որովհետեւ Հայաստանի սահմանակից երկիրը ըմբռնած է, որ Ռուսիոյ դերակատարութեան սահմանափակման փորձերուն լոյսին տակ, տարածաշրջանին մէջ ախորժակներ կը սրեն արեւմտեան երկիրներն ու Թուրքիան, յատկապէս Հայաստան-Ատրպէյճան յարաբերութեան թեմուկի օգտագործումով տարածաշրջանին մէջ ազդեցութիւն բանեցնելու համար: Այս իսկ մտահոգութեամբ հանդիպումներու ընթացքին կը շեշտուէր նաեւ Իրանի մէկ այլ դիրքորոշումը, ըստ որուն՝ տարածաշրջանային անվտանգութիւնը պէտք է պահպանեն տարածաշրջանի երկիրները, իսկ այլ մօտեցում Թեհրանի համար անընդունելի է, որովհետեւ տարածաշրջանէն դուրս անվտանգութեան փնտռուողը հակառակ արդիւնքի կը յանգեցնէ՝ Հարաւային Կովկասը վերածելով ուժերու բախման կետի ու առաւել բարդացնելով տեղ-լոյն խաղաղութեան եւ կայունութեան գործընթացները:

Թեւ Իրանի մօտեցումները նախապէս ալ նոյնը եղած են, սակայն ներկայ զարգացումներուն լոյսին տակ, Թեհրանի մտահոգութիւնը, իր սահմաններուն մօտ արտատարածաշրջանային ուժերու ներկայութեան հարցով, նոր իմաստ կը ստանայ:

Հարաւային Կովկասի մէջ աշխարհաքաղաքական փոփոխութիւններ կ'ուրուագծուին, նկատելի է Արեւմուտքի, յատկապէս Ֆրանսայի աշխույժ ներգործութիւնը՝ Հայաստանի սպառնալիքներով եւ քաղաքական յարաբերութիւններու աշխուժացումով, ինչ որ կ'ուղեկցի հայ-ռուսական քաղաքական յարաբերութիւններու նահանջին:

Յստակ է նաեւ Հայաստանի ելրոպական Միութեան մաս կազմելու ձգտումը:

Այս զարգացումները կը ստիպեն Իրանը ուղղակիօրէն արտայայտելու իր մտահոգութիւնները եւ ակնարկելու, թէ կը մերժէ Ռուսիոյ սահմանափակուող դերին փոխարինումը Արեւմուտքի եւ այլ երկիրներու, յատկապէս Թուրքիոյ դերակատարութեան ընդլայնումով:

Ռուսիոյ ազդեցութեան նուազումով Թեհրան բնականաբար պիտի ձգտի իր քաղաքական, ըստ կարելւոյն նաեւ գինուորական ներկայութիւնը ընդգծելի դարձնել Հայաստանի մէջ:

Իրան տարածաշրջանին մէջ հաւասարակշռող գործօն դառնալու հեռահար նպատակ կը հետապնդէ: Ատրպէյճանի հետ պահպանելով տընտեսական յարաբերութիւններու հարթակ մը, Թեհրան կը կեդրոնանայ Նախիջեւանը Իրանի տարածքով Ատրպէյճանին կապող նոր երթուղիի կառուցման վրայ, միաժամանակ շրջանցել տալով այսպէս կոչուած Չանգեզուրի միջանցքին շուրջ Ատրպէյճանի եւ Մոսկուայի ծրագիրը: Ծրագիր մը, որ կը մերժուի ոչ միայն հայկական կողմէն, այլեւ՝ իրանեան, որովհետեւ հարցականի տակ կ'առնէ Իրանի տարանցիկ նշանակութիւնը:

Երեւանի հետ առանց միջնորդներու բանակցելու Պաքուի դիրքորոշումը եւս կը բխի Թեհրանի շահերէն:

Հայաստան, Ատրպէյճանի սպառնալիքներուն դիմաց, բոլոր կողմերուն հետ հաւասարակշռուած գործակցութեան պարարտ հող ունի: Այդ գործակցութիւնն է որ պիտի խթանէ խաղաղութեան գործընթացը, ոչ թէ Ատրպէյճանին միակողմանի զիջումներ հրամցնելու անհեռանկար քաղաքականութիւնը, որ կրնայ ապագային ատրպէյճանաթրքական շրջափակման մէջ պահել Հայաստանը:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ նախագահեց կառավարութեան հետ փոքրացուած կազմով ժողովի մը, որուն ընթացքին խորհրդակցութիւններ տեղի ունեցան տնտեսական փոքր ծրագիրներու զարգացման վերաբերող քաղաքականութեան շուրջ, նկատի ունենալով, որ անոնք կը կազմեն կարգ մը պետութիւններու տնտեսութեան աշխուժացման հիմնաքարը, որովհետեւ անմիջական ազդեցութիւն ունին ժողովուրդի ապրուստին եւ սոյն ծրագիրներով զբաղող կողմերուն արտադրութեան կարողութեան վրայ:



Նախագահ Ասատ կարելոր համարեց փոքր ծրագիրներ վարող հաստատութիւններու ենթակառուցային զարգացումը, որպէսզի հետագային անոնք միջին եւ մեծ ծրագիրներով զբաղին նաեւ, ինչ որ կը ծառայէ սուրիական տնտեսութեան բարգաւաճման:

-Եգիպտոսի նախագահ Ապտըլ Ֆաթթահ աւ-Սիսի հեռաձայնային հաղորդակցութեամբ շնորհակալութիւններ ուղղեց Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատին՝ Ռամատանի ամսուան առիթով: Կողմերը շնորհակալութիւններ փոխանակեցին իրարու եւ բարեմաղութիւններ յայտնեցին երկու եղբայր երկիրներու ժողովուրդներուն ու համայն արաբական եւ իսլամական աշխարհին:




-Սուրիոյ մշակոյթի նախարար դոկտ. Լուպանա Մշաուէ հանդիպում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահի խորհրդական Դաւիթ Զոպեանին եւ քննարկեց Վարդան Յովհաննեսեանին հետ:



Նախարարութեան յարկէն ներս տեղի ունեցած հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներու մշակութային յարաբերութեան շուրջ: Կողմերը գրուցեցին Սուրիոյ հնագիտական հատուածին կրած վնասներուն մասին վաւերագրական տեսերիզ մը նկարահանելու առումով գործակցութեան կարելիութեան շուրջ:

Իր կարգին նախարար Մշաուէի շեշտեց, որ Փայմիր այն հնագիտական եւ քաղաքակրթական քաղաքն է, որ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ ահաւոր վնասներ կրելով մէկտեղ մնաց կանգուն եւ ամրակուր:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը դիմատետրի իր էջով տեղեկացուց, որ 7 Մարտին, Երեւանի դիւանագիտական դպրոցէն ներս Սուրիոյ դիւանագիտական ուսումնարանին եւ Հայաստանի դիւանագիտական դպրոցին միջեւ փոխըմբռնումի յուշագիր մը ստորագրուած է: Սուրիական կողմէն յուշագիրը ստորագրած է ուսումնարանի տնօրէն, դեսպան դոկտ. Իմատ Մուսթաֆա, իսկ հայկական կողմէն՝ դպրոցի տնօրէն, դեսպան Վահէ Գաբրիէլեան:



Փոխըմբռնումի յուշագիրը երկու կողմերուն միջեւ ստորագրուած առաջին փաստաթուղթն է, որ կը նախատեսէ երկու հաստատութիւններու համագործակցութիւնը՝ դասընթացներու կազմակերպման եւ փորձառութեան ու դասախօսներու փոխանակման միջոցով:

«Գանձասար» որդիական երախտագիտութեամբ ստացաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սակար Սրբ. Եպս. Ազգարեանի հայերէնի թարգմանած

«ԱՐՐՈՅԱԳ ԻՏՈՒԹԻՒՆ»

գիրքը, հեղինակ՝ Ս. Սքտաուըլ: Հալեպ, 2024:

Լուրեր Հայաշխարհին

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՓՈՒՍՎԱՐՉԱՊԵՏԻ զԲԱՍԵՆԵԱԿ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ԿԸ ԴԱՅԱՆՁԷ ԱՆՅԱՊԱՂ ԱՉԱՏԵԼ ԻՐ ԳԻՒՂԵՐԸ»

Հայաստան-Ատրպեյճան պետական սահմանի սահմանագատման յանձնախումբերը մինչև այսօր 7 հանդիպում ունեցած են...



Մեկնաբանության մեջ կ'ըստի. «Ատրպեյճանի Հանրապետությանը չ'ընդունիր վերջին շրջանին հայկական լրատվամիջոցներուն մեջ կառավարական աղբյուրներ տարածուող տեղեկությունը...

«Ատրպեյճանի Հանրապետությանը, չ'ընդունիր վերջին շրջանին հայկական լրատվամիջոցներուն մեջ կառավարական աղբյուրներ տարածուող տեղեկությունը, թե Հայաստանի 31 գիւղերուն պատկանող հողերը կը գտնուին Ատրպեյճանի բռնազրաւումին տակ:»

ԱՊՏՈՒԱԶԵԱՆ. «ՀԱՅ-ԻՐԱՆԵԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ՆՐՁԱՆԻՆ ՄԵՋ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՂՈՒՅԻՆ»

Հայաստանի հետ բոլոր ոլորտներուն մեջ բարի դրացիական յարաբերությունները ընդլայնումը ձեռնարկ է երկու երկիրներուն եւ համահունչ շրջանին մեջ խաղաղության, կայունության եւ անվտանգության: «Ազատություն» ձայնասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Իրանի արտաքին գործոց նախարար Հիւսէյն Էմին Ապտոլլահեանը:



Իրանեան դիւանագիտության պետը կրկին շեշտած է «օտար երկիրներու միջամտությունէն զերծ մնալու» Իրանի դիրքորոշումը: Ապտոլլահեան կարեւորելով կարգի յայտարարած է, որ Հայաստան կարեւոր կը նկատէ Իրանի հետ յարաբերություններու ընդլայնումը՝ վերահաստատելով, որ անկախ կը նպաստէ շրջանի կայունության ու անվտանգության:

Կոստանեան արդիւնաւետ որակած է Իրանի արտաքին գործոց փոխնախարար Ալի Պաղերի Զանիի հետ բանակցություններն ու ներկայացուցած քաղաքական խորհրդակցություններու նոր փուլի ծիրին մեջ իրանցի պաշտօնակիցին հետ ունեցած բանակցություններու մասին զեկուցումը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց փոխնախարարը յայտնած է, որ համաձայնած են տարբեր մակարդակներու վրայ շարունակել խորհրդակցությունները:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ. «ՏԱՌՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՈՐԵՒԷ ԳԻՒՂ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԽՍՍԷ ԳԷ ԵՂԱԾ ԵՒ ԳԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱՆ»

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինեան վստահեցուց, որ երբեք, ոչ մէկ քննարկման ընթացքին խօսք չ'է եղած եւ չ'ի կրնար ըլլալ Տաւուշի մարզի որեւէ գիւղ Ատրպեյճանին յանձնելու մասին:



«Արմէնփրէս»-ի հաղորդումով՝ ՀՀ վարչապետը այս մասին յայտարարեց 12 Մարտի ասուլիսին՝ ի պատասխան այն հարցումին, որ Ատրպեյճան կը շարունակէ տարածքային պահանջներ ներկայացնել ՀՀ-ին՝ հայկական կողմէն պահանջելով իրենց յանձնել Տաւուշի մարզի 4 գիւղ:

Նիկոլ Փաշինեանի կարծիքով՝ այդ հարցին շուրջ կայ որոշակի թերըմբռնում եւ թիւրըմբռնում:

«Նախ արձանագրենք, թե ո՞րն է Հայաստանի Հանրապետությանը, որպէսզի այդ արձանագրումէն ելլելով՝ կարենանք յստակօրէն ձեւակերպել, թե ո՞ր, ինչպէ՞ս Ատրպեյճան ունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ եւ ո՞րն է, որ, ըստ էության չ'ունի տարածքային պահանջներ ՀՀ-ի նկատմամբ», ըսաւ Փաշինեան՝ ներկաներուն ցոյց տալով ՀՀ տարածքի քարտէզը:

Առաջարկելով մէկ կողմ դնել Ատրպեյճանը՝ վարչապետը առաջարկեց հանդէս գալ սեփական ելակետէ:

«Կ'ըստի, որ ՀՀ կառավարությանը կը պատրաստուի Տաւուշի մարզի գիւղեր յանձնել Ատրպեյճանին: Երբեք, ոչ մէկ քննարկման ընթացքին խօսք եղած է եւ կրնայ ըլլալ Տաւուշի մարզի որեւէ գիւղ յանձնելու մասին», ընդգծեց Փաշինեան՝ անցնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքին Ատրպեյճանի հնչեցուցած անուններով գիւղեր երբեք չ'են եղած՝ ոչ միայն Խորհրդային ժամանակներուն, այլեւ անկէ վերջ:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՈՒՅԱԾ ԵՆ ՈՒՏԱՅԻՆ ԿԵԳՐՈՆՆԵՐՈՒ, ԱՉԴԵՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՄԱՆ ՎԱՅՐ, ԻՆՉ ՈՐ ՅՐԻ Է ՇԱՏ ԾԱՆՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐՈՎ»

«Հայաստան» խմբակցության պատգամաւորները կը շարունակեն մարզային հանդիպումները: Հերթական հանդիպումը Արմաւիրի մարզի Արմաւիր գիւղին մեջ էր, հանդիպումին ներկայ էին ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցության պատգամաւոր Իշխան Սաղաթելեան, պատգամաւորներ Լեւոն Քոչարեան, Արուստ Կարդանեան, Աննա Գրիգորեան, Ազնեսա Խամոյեան, Գեղամ Մանուկեան, Աշոտ Սիմոնեան եւ ուրիշներ:



«Առանց չ'ափագանցելու մեր երկիրը կանգնած է շատ ծանր եւ նոր մարտահրաւերի առջեւ», Արմաւիրի մեջ քաղաքացիներուն հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Իշխան Սաղաթելեան:

«Այս իշխանությունները, որոնք խաբելով եկան իշխանության դեկին, իրենց վարած գործունեության հետեւանքով Արցախի հայաթափումէն ետք Հայաստանը կանգնեցուցած են ծանր խնդիրներու առջեւ: Երկու տիպի մարտահրաւեր ունինք՝ արտաքին եւ ներքին: Արտաքին իմաստով թուրք-ատրպեյճանական դաշինքը կը շարունակէ նախադրեալով Հայաստանի նկատմամբ, արդէն բացայայտօրէն կը միջամտէ Հայաստանի ներքին գործերուն, ոչ միայն չ'կայ դիմադրություն, այլեւ Հայաստանի իշխանությունները հետեւողականօրէն, շատ յաճախ նաեւ սիրով կը կատարեն թշնամական պետություն թելադրանք մեր հայրենիքին մեջ: Թշնամին կը գտնուի Հայաստանի տարածքին մեջ, բացայայտ յաւակնություններ կը ներկայացնէ նոր տարածքներու նկատմամբ եւ չ'կայ որեւէ դիմադրություն: Իշխանություններուն առաջարկած բանաձեւը հետեւեալն է՝ տանք որքան կ'ուզեն՝ յոյս ունենալով որոշակի պահու մը հասնիլ խաղաղության: Սա ձայնողած ճամբայ է, եւ Արցախի հայաթափումէն ետք առնուազն, անոնք, որոնք յոյս ունենին, որ տանք, խաղաղություն պիտի ըլլայ, առնուազն հիմա պիտի հասկնան, որ սա կեղծ է, պիտի տանի նոր փորձության եւ ըստ էության մեր պետականությանը պիտի դնէ հարցականի տակ», ըսած է ան:

Ըստ Սաղաթելեանի, միւս խնդիրը այն է, որ այսօր Արեւմուտքը կը փորձէ Ռուսիոյ դէմ նոր ճակատ բանալ՝ ի դէմս Հայաստանի. «Հայաստանի Հանրապետության իշխանություններուն վարած քաղաքականության հետեւանքով այսօր մեր երկիրը դարձած է ուժային կեդրոններու ազդեցություններու բախման միջավայր, որ յղի է ծանր հետեւանքներով: Այս պայմաններուն մեջ ցաւօք, կը շարունակուին ներքին պառակտումները, կը շարունակուի պայքարը ազգային կառոյցներու, եկեղեցւոյ եւ ընդհանրապէս հայկական ինքնության նկատմամբ: Այս իրավիճակին մեջ մենք պէտք է պայքարինք թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիներու դէմ»:

ՈՒՐԿԵՐ ԶԱՍԱՆԵ. ԴԵՊԻ ՈՐԻ - 1

«ՉԵՆ ԸՆԵՐ, ՃԱՆԸՄ». ԲԱՅՑ ԸՐԻՆ...



Ս. Մահտերճեան

**Հագար ու մի վերջ ես տեսել, - էլի՛ կը տեսնես...
(...) Աշխատեցի արտի նման՝ Հագար գողերի
Չհաւաքուած բերք ես տեսել, - էլի՛ կը տեսնես:
Ե. ՉԱՐԵՆՑ**

Երբ մեծն Չարենց իր «Հայաստանին» խորագրեալ գագաթը կը գրէր, վստահաբար իր աչքին առջեւ ուներ հագար փորձանքի ու արհաւիրքի մեջն անցած Հայաստանն ու մեր ազգը: Նոյնքան վստահութեամբ կրնանք արձանագրել, թէ անոր մտքէն չէր անցած, որ իր եւ մեր հայրենիքը պիտի հասնի ներկայ աղէտալի վիճակին, անյատակ վիճակի վար գլորելու կացութեան:

Հայաստան, որ 1918-ին «անձեւ քառս»-ի մեջն ծնունդ առաւ իբրեւ անկախ հանրապետութիւն, յետոյ, իր գաւակներուն պայքարով, արեւմտ գնով ընդարձակեց իր տարածքը, գայն վերածեց բացարձակ մեծամասնութեամբ հայաբնակ հայրենիքի, յետոյ, տասնամեակներ շարունակ ենթակայ մնաց խորհրդային կարգերուն (այդ փուլի նուաճումներն ալ, աղէտներն ալ ծանօթ են բոլորիս), ի վերջոյ, անկախութեան արեգակը կրկին փայլեցաւ իր երկինքին մէջ: Արցախեան Շարժումին ճամբով, անգամ մը եւս պայքարով ու հնարամտութեամբ՝ իր գաւակները յաջողեցան վերաշահիլ խլուած տարածքներ, հիմա, յատկապէս վերջին երեք ու կէս տարիներուն, այսինքն՝ 44-օրեայ պատերազմէն ասորին, մերթ մեծ, երբեմն փոքր քայլերով կը վազէ կորուստէ կորուստ: Ինչո՞ւ, որովհետեւ բարի խոստումներով իշխանութեան հասած խմբակը կրկին ու կրկին փաստած է, թէ միաժամանակ անկարող է ու ստախօս, համբակներէ կազմուած է գրեթէ բոլոր մարզերուն մէջ, քաղաքականէ մինչեւ դիւանագիտական, զինուորական, տնտեսական եւ՝ ներքին համերաշխութիւն գոյացնելու իմաստով (ցանկը երկար է, կայ նաեւ օտարին վարձկանը, կամակատարը ըլլալու փաստացի իրողութիւնը):



Օր չ'անցնիր, որ վնասարար ճախաւերութեան նոր փաստ մը, կորուստներ նոր քայլեր չ'անուրին իշխանապետին ու կողքին (չ)գործողներուն կողմէ: Օր չ'անցնիր, որ խելամիտ մարդիկ, ի Հայաստան եւ Սփիւռքի տարածքին, իրենց նկատողութիւններով, մեկնաբանութիւններով եւ վերլուծումներով, լսատեսողական ցուցահանդէսներ չ'արքեւն կործանարար ընթացքին մասին, եւ սակայն, կարծեք թէ այդ բոլորը կը վերածուին անապատի մէջ ցամքող վտակի. լսողներ կան, սակայն շատեր կը նախընտրեն... չ'լսել ու չ'տեսնել իրականութիւնները, կը նախընտրեն կրաւորականութիւն, կառնած մնալ իշխանաւորներուն սուտերով հիւսուած «թռչող գորգ»-երուն, որոնք այլապէս փտած են ու ծուէն-ծուէն դարձած, այլեւս անկարող են պահպանելու իրենց կառնողներուն ապահովութիւնը, բարօրութիւնն ու ապագան, ալ ո՛ր մնաց՝ ազգ ու հայրենիք, Սփիւռք եւ հագարամեակներու ժառանգութիւն:

Կ'արժէ, որ երբեմն օր աւուր «հրամցուած» վազքին դիմաց կանգ առնենք պահ մը եւ հարց տանք. ուրկէ՞ սկսանք, ո՛ր հասած ենք եւ այս վազքը դէպի ո՛ր կը տանի, եւ, ամենէն կարեւորը, ինչպէ՞ս կարելի է - պարտաւորել ենք - կորուստներուն սանձումը, վերականգնումը:

ԱՂԵՏԱԲԵՐ ԲԱՅՑԵՐԵՆ ՄԱՍՆԻԿ ՄԸ

Միացեալ Նահանգներու նախորդ նախագահին՝ Թրամփի պաշտօնավարութեան առաջին տարին չէր լրացած, երբ ամերիկեան թերթ մը հրատարակեց անոր սուտերուն մէկ ցանկը՝ մօտաւորապէս 1 500 սուտ: Անկէ ետք, այդ երկիրը ապրեցաւ բազմաթիւ տաք ու պաղ փուլեր, սակայն գայն կառավարողներուն բերած վնասները անբաղդատելի են մեր հայրենիքի իշխանաւորներուն ըսածներուն եւ ըրածներուն հետ: Մեր ողբերգութիւններուն մէկ արմատը բաւական հին է. քաղաքական մարդիկ, պատմագետներ, մշակոյթի եւ եկեղեցւոյ ծառայողներ ու շատ-շատեր ամէն քայլափոխի ահագնազ հնչեցուցած են, գալիք նոր աղէտներուն մասին նախատեսութիւններ կատարած են՝ փաստեր ցոյց տալով (հիմա ալ կ'ընեն), սակայն մնացած են անտեսուած. նախատեսութիւններուն մեծ մասը կարճատեւ ետք իրականութիւն դարձած է, եւ... կործանումը կը շարունակուի մինչեւ այսօր: (Չմոռնանք, որ «նախկին» պիտակին արժանացած Թրամփը կը թուի դարձեալ շահած ըլլալ Հանրապետական կուսակցութեան թեկնածուն ըլլալու տոմսը):

Չենք ուզեր մտնել «Բիւզանդական բանավեճ»-ի այն ոլորտներուն մէջ, թէ արդեօք այս իշխանաւորները կամովի՞ն, թշնամիին կամակատարը-գոր-

ծակալը ըլլալո՞ւ, դուրսերէն կառավարուած ըլլալո՞ւ հետեւանքով, թէ անգիտակցաբար (չգործածենք տգիտաբար, դաւաճանաբար եզրերը) ըրին ու կ'ընեն այս բոլորը, որովհետեւ մեր ժողովուրդին ու հայրենիքին շահերուն դիտանկիւնէն, պատասխանները ո՛չ մէկ տարբերութիւն կ'ընեն (չմոռնանք նաեւ, որ նախորդ իշխանաւորներէն գոնէ երկուքը, երբ նկատեցին, որ հասած էին իրենց կարողութենէն վեր պատի առջեւ, հրաժարական տուած էին):

Եկէ՛ք, փորձենք մասնակի ցանկը կազմել «խաղաղութիւն պիտի բերենք»-ներով ու «ապագայ կայ»-ով (իբրեւ թէ) երկիր կառավարողներուն կործանարար արարքներուն:

Խաղաղութեան փոխարէն, ունեցանք քանի մը, չըսելու համար շարունակական պատերազմներու շղթայ մը (ճիշդ է, որ Հայաստանի եւ Ատրոպէյճանի միջեւ նախորդ տարիներուն ալ պատերազմական վիճակը ամբողջովին չէր փարատած, սակայն հիմա...):

Անցեալ տասնամեակներու առաւել կամ նուազ յաջողութեամբ տարուած յաղթանակները ո՛չ միայն կը փոշիանան, այլ մինչեւ իսկ փորձ կ'ըլլայ հաւատացնելու, թէ մենք Ռ՝Չ ՄԵԿ ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱԾ ԵՆՔ, նախկինները միայն պարտութիւն բերած են, 2016-ի պատերազմն իսկ պարտութեամբ աւարտած ենք, Շուշին չենք ազատագրած 1993-ին, այլ «ազերիներէն խլած ենք» ու հիմա վերադարձուցինք իր տիրոջ: Իսկ ամենէն ահաւորն ու ողբերգականը՝ մեր գոհերը անիմաստ բաներու համար ճակատած են թշնամիներուն դէմ: Եւ ահա՛ Եռաբլուրը պղծելու շարաններ...:

Նախ կորսնցուցինք Արցախի 75 առ հարիւրը, մարդիկ ըսին, որ մնացեալն ալ կորստեան վտանգի տակ է. այդ ալ պատահեցաւ վեց ամիս առաջ: Իշխանաւորները, ինչպէս իրենց բոլոր ճախաւերութիւններուն ատեն, նոյնպէս ալ այս կորուստներուն՝ փորձեցին յանցաւորներ գտնել ներսէն ու դուրսէն, յաճախ պարուրուելով «նախկինները ըրած էին» ստաբանութիւններու պատմուճակին մէջ (նախկիններուն մեղքերը գոնէ չեն տարածուիր այս կալուածներուն վրայ): Յաւելուած մը կ'ուզէք. հայկական աւաններ եւ շրջաններ՝ թրջական անուրով կոչելը, առանց մոռնալու «Արցախը Ատրոպէյճանին պատկանած է», «Ատրպէյճանին ամբողջականութիւնը կ'ընդգրկէ Արցախն ու Հայաստանի սահմանամերձ մասնիկները» ու նման ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԱՍԱՏՈՒՄՆԵՐ:

Երկրի ապահովութեան գլխաւոր երաշխաւորին՝ բանակին «կրնակը կորտրեցին» պատերազմով ու անոր հետեւած՝ անփոյթ վերաբերմունքով: «Բանակը պիտի վերակազմակերպենք»-ներն ու նման հաւաստիքներ լոյս աշխարհ չ'ելան, ընդհակառակն, արձանագրուեցան աղէտներ, բանակայիններու ձեռքերը իրողական կապանքի մէջ դրուած են, բարձրաստիճան զինուորականներ պաշտօնազրկուեցան ու հալածանքի ենթարկուեցան, բանակի ղեկավարութիւնը մատնուեցաւ խղճալի վիճակի (չմոռնանք, որ թըշնամիները քանիցս այս իմաստով պահանջներ ու նախապայմաններ դրին իշխանաւորներուն դիմաց):

Երկիրը վերածուեցաւ ոստիկանական բռնապետութեան, երբ անդին, խօսքի աճուրդ տեղի կ'ունենար (հիմա ալ տեղի կ'ունենայ, գնո՞ղ ալ կայ), թէ Հայաստանի մէջ օրինակելի՞ ժողովրդավարութիւն կը կիրարկուի: Պաստիռնին մէջ է որ կը կրկնուին... ընդդիմադիրներու դէմ հալածանքները, կը բազմանան քաղաքական բանտարկեալները, անհիմն ու յերկրածոյ մեղադրանքներ կ'արձակուին ճշմարտախօս հակառակորդներու դէմ, խաղաղ ցուցարարներ եւ նահատակներու մայրեր ասֆալթ «կը համտեսեն», քուէարկութեամբ ընտրուած ընդդիմադիրներ պաշտօնէ կը հեռացուին, կը բանտարկուին, արդարութիւն պահանջող արցախցի ցուցարարներ իսկ կը խոշտանգուին...:

Ժողովուրդը մատնեցին երկփեղկումի (երկփեղկումը մեղմ բառ է, կըրնանք ըսել՝ բազմափեղկում), այս «տրամաբանութիւնը» տարածեցին նաեւ դէպի Սփիւռք եւ անոր համար գործի լծեցին յատուկ յանձնակատար մը...: Անցեալին ալ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները անթերի չ'էին, բայց գոնէ կար ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ մակարդակի գործ (հիմա պէ՛տք է երանի տանք նա՛եւ այդ օրերուն, ինչպէս որ երանի կու տանք... 9 Նոյեմբերի յայտարարութեան):

Ազգային արժէքներ եւ անանդներ դարձան խաղալիք. Եկեղեցին դարձաւ հալածանքի, վարկաբեկումի եւ անտեսումի թիրախ (աղանդաւորականներն են օտարամուտ տարրերու հետ գործակցութեամբ): Հայագիտութիւնն ու մեր մշակոյթին հարազատ պահպանման հիմերը հարուածներու տակ ինկան, սկսելով համալսարաններէն, հասնելով մինչեւ միջնակարգի եւ այլ դասագիրքերը: Դարաւոր խորհրդանիշ Արարատը դարձուցին օտարումի նիւթ, փորձեցին «մրցակցութիւն» ստեղծել Արարատի եւ Արագածի միջեւ, ձեռով մը յետին էջ նետելով Սիփանն ու Նեմրուժը, Հայկական Տաւրոսն ու Սասունը: Հիմա ո՞վ կը խօսի Մուսա Լեռան եւ Կիլիկիոյ բարձունքներուն՝ Չեյթունի, Վահկայի եւ այլ ամրոցներու մասին...:

44-օրեայ պատերազմին թէ Արցախի վերջին մասնիկին խլման օրերուն գերի ինկողները ու պատանդները մոռացութեան մատնած են, իսկ երբ ազգերի ինկուրտ մը «կը մոլորի» եւ հայկական հող կը հասնի, քանի մը օր ետք, «բարի կամք արտայայտելով» կը վերադարձնեն Պաքու, ինչպէս որ ըրին մօտիկ անցեալին՝ ազգերի ոճրագործներու վերադարձով, այսպիսով յաւելեալ վառելանիւթ հայթայթելով Ատրպէյճանի նախագահին ու անոր քարոզչական մեքենային յոխորտանքներուն: Անոնք այլեւս բացայայտօրէն, բանի՛ւ եւ գործով ցոյց կու տան, որ Հայաստանի իշխանական խումբը միայն մէկ ճամբայ ունի, լիովին կատարել իրենց պահանջները, իրական-

«ՆԱԼԷՊԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ»... ՍՓԻՒՌՔԱՆՁՅՈՒԹԵԱՆ ԳՈՅԱՏԵՒՈՒՄԸ (SUSTAINABILITY) (Ե. ՄԱՍ)

Փրոֆ. Արա Սայեդ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԱԳՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՊԱՂՆԵԻ ԵՎ ՊԱՐԱՄՈՐԻՉ ԴՐՈՒՄԱՅԱԿԱՆ

Լիբանանահայության վշտալի տազանալի (1975-1990) փորձառությունները երկու տասնամյակ ենթ, 2011-ին ծայր առած սուրիահայության ողբերգության հետևանքները կը շարունակուին: Մեր նոր ու հին հիասթափեցնող դառնությունները մեզ կը սթափեցնեն գրգռող հրամայականությամբ, իրենց տողապատյան յատակ պարունակով, խորհուրդով մեզ կը դրդեն, մեզ կը յորդորեն ինքնաքննարկում, բաղդատական դատողություն, ողջմիտ ինքնաքննադատություն կատարելու:

Աղետներու եւ կորուստներու մարդաբանության զուգահեռ, աղետներու նուազեցման եւ կառավարման (Risk Engineering, Risk assessment) գիտական միաւոր մը, արհեստավարժ համակարգ մը յառաջացուցա՞ծ ենք արդեօք, ակադեմիական քննարկումի խորհրդածություններով, զրուցասեղաններով, դասընթացներով, գիտաժողովներով բարձրացուցա՞ծ ենք մեր ազգային անվտանգության փորձառության մակարդակը, գոյացուցա՞ծ ենք համայնքային նախագուշակական բարձր պատրաստութեամբ միացեալ ղեկավարութեան բջիջ մը, միաւոր մը ունենալու անյետաձգելի օրակարգը:

Եթէ կան նման նախաձեռնություններէ բխած զեկոյցներ, աշխատանքային ծրագիրներ ըլլա՞նք անոնք՝ ներգաղութային, միջգաղութային թէ համափիւռքեան զեկոյցներ իսկոտ յանձնարարելի է զանոնք հրապարակելով եւ գործնական ծրագրերով գործի մղելը, աշխատանքի լծելը: Յանձնառու այն ժամանակն է, որ հայ Սփիւռքը կեդրոնաւոր իր ներազգային տազանալիներու, մարտահրաւերներու եւ ինքնութեան զրահապատումի անյետաձգելի հարցերուն վրայ: Գիտական, արհեստավարժ ու գործնական ելքեր գտնելու ուղիութեամբ, մեր անվտանգութեանը, տեսակարարութեանը միայն խօսույթներով, լոզունգներով չպահենք:

Ինչպիսի՞ գործելակերպերով պէտք է դիմագրաւենք մեր ազգային անվտանգութեան դիմաց ցցուող սպառնալիքները, որոնք սունկի նման արագօրէն կը վերածուին ահաւոր մարտահրաւերներու՝ մեզ պարտաւորեցնելով անյապաղելի մշտադիտարկումի գործնական առաջնահերթութիւններու:

Տազանալի սկիզբը համայնքի այսպէս կոչուած ղեկավարութիւնները, քաղաքական դիրքի վրայ անուանուած կամ նշանակուած կուսակցական ղեկավարները անհետանկար էին, համայնքի հաւաքական անվտանգութիւնը ապահովող համոզիչ հեռապատկեր մը չունէին: Թերեւս արտագաղթի դէմ էին, չէին ուզեր, որ տեղի ունենայ զանգուածային արտագաղթը, բայց ի՞նչ ծրագիր կամ ինչպիսի՞ գործելակերպ ունէին արտագաղթը կասեցնելու կամ նուազեցնելու համար: Ահագնացող տազանալի օրերու թաւալումին հետ անաղմուկ սուսիկ-փուսիկ անոնցմէ շատեր հեռացան, արտագաղթեցին:

Լաւ հարց տանք, եթէ մեր համայնքի քաղաքական ղեկավարութիւնները, նշանակուած կուսակցական ղեկավարները, ԶԵՆՍԵՍ ՈՒ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՄԹԱԾԵՆ, մասնագիտականօրէն չվերլուծեն, ազգապահպանման հաւաքական ղեղագրեր չնախատեսեն, հայ համայնքի հաւաքական անվտանգութիւնը չծրագրեն, չհամակարգեն ու զայն չհսկեն, հապա ո՞ր կառոյցը կամ ո՞վ պիտի ստանձնէ ճակատագրական օրերու, ճգնաժամային իրավիճակներու պատասխանատուութիւնը, իրապարտութիւնը, ինքնամտորոշութիւնը:

Սփիւռքահայ կառոյցները չունին հաստատութեանական (Institutional) մտածողութեան համակարգեր, զգալի է մեր հաստատութեանական քաղաքականութեան անգոյութիւնը: Սփիւռքի մեր կառոյցը պետական հաւաքականութիւն ՉԵ, ուստի չկան մեր ազգի հանդէպ պատասխանատուութեան, համարատուութեան եւ հաշուետուութեան լծակներ, դէտեր, մարմիններ: Սփիւռքի մեր կառոյցներու կազմութիւնը եւ հայակենցաղ շարունակելու կամքը տնօրինուած է ազգափրկութեան եւ սիրողական մակարդակով, կառուցուած է ընդհանրապէս ձրիաբար ծառայելու, ազգային ջանք սրտին սեղմած սիրայօժար նուիրեալներու հաւատամքներու նուիրութեամբ:

ՍՓԻՒՌՔԱՆՁՅՈՒՆ ԳՐԱՎՈՐ ԴԻՔՏՈՐՈՇՈՒՄԸ ԳԵՐԻՆԵՂԻՐ Ե

Սուրիոյ տազանալի ծնունդ առած գրականութեան վերաքաղէն կարելի է նկատել եւ հաստատել, որ քաղաքական շուարած դիրքորոշումը գերխնդիր էր եւ՝ այսօր:

Ընդհանրապէս սփիւռքահայ բոլոր համայնքներու համար դարերէ ի վեր կողմնորոշուելու չլուծուած հարց մը ունինք, այդ պատճառով միշտ ալ զիջած կամ կորսնցուցած ենք տասնեակ տարիներով մեր իրագործած նիւթաբարոյական ժառանգութիւնները, հաւատալով նաեւ, որ մեր ստեղծագործած հայկական ժառանգութիւնը, իբրեւ համամարդկային ժառանգութիւն, պիտի յանդիմանայ տեղւոյն պայմաններուն մէջ, որոնք հայրենի հողի վրայ են: Այն իմաստով, որ լիբանանահայության տասնհինգ տարիներու արհիւնտ վերքը, իրավիճակը նախատեսելու բանիմացութիւնը չզարգացուցինք, չխորացուցինք, դարձեալ դասեր չբաղեցինք, պահ մը չմտածեցինք՝ թէ ի՞նչն է ինչպէ՞ս ծրագրել, ի՞նչ պէտք է ընել, ինչպէ՞ս ԴԻՔՏՈՐՈՇՈՒՄԸ եթէ այդ առեւելի, անսպասելի տազանալի կրկնուի սահմանակից հայ համայնքին՝ Սուրիոյ մէջ, ինչպէս Լիբանանէն ենթ իրաքահայութիւնը, իրանահայութիւնը տանջուեցաւ իրաք-իրան պատերազմով: Այդ բոլորը իբրեւ ճակատագրական իրողութիւններ ընկալեցինք, ընդունեցինք եւ կ'ընդունինք իբրեւ «Յայր ճակատագիր է» ըսելով, հաւատալով կը հաւատանք, որ «Մեր չար բախտն է», բայց հաստատակամ կը շարունակենք շինարարական կորոններու վիթխարի եւ մեծածախս նախագի-

ծերու հանգանակութիւններ ծրագրել, նուիրատուներ որսալ:

Մեր ազգային մեծագոյն, լրջագոյն եւ հարուածող տազանալիներն մէկն է մեր արտագաղթը եւ սփիւռքներու մէջ մեր սրընթաց ու հեզասահ ճուլումը: Գաղութական արտագաղթի հանդէպ մենք անկազմակերպ ենք, անծրագիր եւ անկարգապահ ենք եւ այդպէս ալ վերաբերեցանք սրընթացօրէն ծայր առած ներքին այդ տազանալիներուն հետ: Զեռատեսութեան ակնթարթ մը նոյնիսկ չունենալով, չմտաբերելով, չպատկերացնելով, որ լիբանանահայության տազանալի եւ հայ գաղութներու նախորդող կործանիչ փորձերը առաջինը չէին, անվիճելի հաւանականութեամբ արտագաղթի մեր տազանալիները կրնային կրկնուիլ եւ պիտի կրկնուին Միջին Արեւելքի մէջ:

Այս տարածաշրջանին մէջ պատերազմներու, հակամարտութիւններու պատմութիւնը շարունակական է տարբեր պիտակներով, մանաւանդ Օսմանեան կայսրութեան փլուզումէն ենթ այնքան փխրուն քաղաքականութեամբ բախող եւ մանաւանդ՝ տնտեսական եւ քաղաքական ներքին փակուղիներով, ինչպէս նաեւ ընկերային յարափոփոխ տազանալիներով եւ ընդհանրապէս պայթուցիկ Լիբանանի, Թուրքիոյ, Իրաքի, Սուրիոյ եւ այլ հայրենամերձ հայ համայնքներ պարփակող միապետական համակարգով կառուցուած երկիրներուն մէջ:

ԵԶՐՈՓՈՒԿ ԴԻՏԱԿՈՒՄՆԵՐ

Մեր ազգային հաւաքական սարսափելի հոգեխոցն է՝ Զայոց Ցեղասպանութեան ենթ՝ վերջին ութ տասնամյակներու աշխարհաքաղաքական յարափոփոխ իրավիճակները, զանազան երկիրներուն մէջ բախտորոշ տազանալիներ կը շարունակուին: Տեղաշարժելով նաեւ հոն ապրող հայ համայնքներու անհատները, զանգուածային արտագաղթերը եւ հայաթափումը, որ աւելի կը սատարէ հայ փոքրամասնութեան թիւի նօսրացումին, կրկնակի վերսփիւռքացումին, քիչ մը աւելի սպառնալով մեր ազգային տեսականութեան, մշտականութեան: Արտագաղթերու եւ հայաթափումի նոյն կրկնութիւնները տարբեր տեղանուններով, մեզ պէտք է թախանձեն մտածելու, դատելու եւ կողմնորոշուելու, իրատեսութեան լուրջ եւ գործնական ուղիներ խորհրդածելու:

Անկասելի արտագաղթերը, ենթադրաբար արեւմտեան կողմն աշխարհի ովասիսներու ուղեգիծ մը, ընտրութիւն մը ունին: Նոր ովասիսներու ընտրութիւնը, կարծեցեալ այն վարկածը ունի, որ աւելի անվտանգ, խաղաղ եւ բարօրութեամբ լեցուն եւ երբեմն ալ անխախտ, մշտնջենաւոր բնորոշումով կ'արդարացուի: Ընտրութիւն մը, որ վճռորոշ դեր կը խաղայ երիտասարդ սերունդի՝ հայրու ինքնութեան կամ ազգային դիմագիծի ինքնըմբռնումի եւ ինքնաճանաչողութեան փնտռումին ընթացքին, որ կարելի է յատկանշել իբրեւ՝ ԶԳԱՅԱԿԱՆ ԿԱՄ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ ԶԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԿՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԻ ԻՐԱՄԱՅԱԿԱՆ ԴԻՄԱԳ ՍՓԻՒՐՔՆԵՐԸ ՏԱԿԱԼԻՆ ԱՆԽՈՍ Ե, ԱՆՃՆՆԻՏԱՆ ՈՒ ԱՆՃՐԱԳԻՐ Ե ԱՅՍՕՐ: Բացի անտարբերութենէն եւ շողջողուն լուրջութենէն եւ կոչերէն, այդ գերմարտահրաւերը մեր ԲՈՒՆՈՐ ղեկավարութիւններու միաւորները ինքնաքննարկումի եւ զգաստութեան ՊԵՏԵ Ե ԿՈՉԵ, մեզ ԱՐՄԿԱՅԱՐԵ ԵՒ ՄՐԵ յանձնառու պատասխանատուութեան, ինքնաքննադատութեան եւ գործնական քայլափոխի:

Ներկայիս անվերջ նորացող դրութիւններով համացանցային դարաշրջանի լայն կարելիութիւնները օգտագործողներն ենք, ըլլա՞յնք անձնական, թէ արհեստագիտական ասպարեզներու մէջ, հրամայական է, որ անոնց օգտագործումը ըլլայ նաեւ աշխարհասփիւռ հայ համայնքի միաւորներու միջեւ՝ արդի ցանցանետարդ (Neural), հեռահաղորդակցութեան (telecommunication) եւ այլ համակարգերու միջոցներով, օգտագործելով նաեւ արհեստական բանականութիւնը (Artificial Intelligence), որ դարձած է մեր առօրեայ կեանքի անքաճանելի մասը՝ այդ կը նշանակէ՝ ստեղծագործ եւ մասնագիտական, բազմաշերտ ու բազմաբովանդակ մտածողութեան հրամայականը կայ մեր ներգաղութային, միջգաղութային թէ համափիւռքեան կեանքի տարբեր ոլորտներու մէջ, համագործակցելու կերպերը ամրապնդելու, ցանցակերպ խմբաւորումներով միաւորելու, օղակաւորելու, համախմբելու, վերաբժանելու եւ ծրագրաւորելու:

Արտագաղթերու դառնահամ տազանալիներ համետեսող հայ Սփիւռքը, ասանդակաւ հաղորդակցութեան կողքին համացանցային արհեստագիտութեան օգնութեամբ ԶԻՐԿԱԳՐՈՒՄԸ Ե, որ 1) ցանցակերպ հաղորդակցութեան կամրջումի, ինքնայօժար հանդիպումի, համատեղումի եւ համարկումի մասնագիտական գործադաշտերու պուրակներ ստեղծէ, 2) չվերադարձող հայրենակիցներու հետ հաղորդակցական առցանց միջոցներով միացնէ, խմբակներ կազմէ, 3) վերոյիշեալ օրակարգերը մտորելու, մասնագիտական միջգործակցական (Interactive) աշխատակազմեր, խմբաւորումներ ստեղծէ, որոնց հրամայական օրակարգերն են՝

Ա) աշխատանքային ուղիներ ճշդել մեր հաւաքական միգամած յիշողութեան փրկութիւնը ապահովելու համար,

Բ) սփիւռքահայության մարդաբանութեան ծրագրերու գործընթացներ մշակել եւ գործիքակազմեր որոնել,

Գ) ապահովել հայ համայնքներու անվտանգութեան յանձնառու հեռանկարային քաղաքականութեան օրակարգի քննարկումը, մշտադիտարկումը եւ վերջապէս՝

Դ) հայ փոքրամասնութիւններու ԳՈՅԱՏԵՒՈՒԹԵԱՆ (sustainability) հիմնահարցը հիմնաւորել եւ քառաժայր խարիսխներով արմատաւորել:

Կը հաւատանք, որ նման գործելակերպ օգնութեամբ պիտի կարողանանք հայ մարդու այս պարագային ՍՓԻՒՐՔԱՅՈՒՄԸ տեսակի կենսագոյութեան ապագայակերտ տեսլականը՝ ծրագրուած գիտական գործիքակազմերով, միացեալ յանձնառութեամբ հոգատարելու եւ յատկապէս ԳՈՅԱՏԵՒՈՒԹԵԱՆ մարտահրաւերը նուաճելու:

(ԿԵՐՉ)

Նախորդ մասերը կարելի է կարդալ

- <http://www.kantsasar.com/news/48434-2/>
- <http://www.kantsasar.com/news/48557-2/>
- <http://www.kantsasar.com/news/48680-2/>
- <http://www.kantsasar.com/news/48838-2/>

ՄԱՆՐԱՎԵՊԵՐ



Յակոբ Չոլաքեան

9.- Յոբելեարը

Համաստեղի (ծն. 1895) ծննդեան 70-ամեակին հանդիսություններու շարք մը սկսած էր Սփիւռքի մէջ: Մեծ Եղեռնի 50-ամեակէն անմիջապէս ետք խորհուրդ մըն ալ ուներ այս յոբելեանը: Մեզի համար կորուսեալ գիւղն ու հայրենին ոգեղինացնող գրողն էր Համաստեղը իր «Գիւղը» եւ «Անձրեւը» պատմութեան ժողովածոներով եւ յաջորդող գործերով:

Ուրիշ բան ալ կար: Ուզած էին մեծ գրողը պատուել իր կենդանութեան, երբ մենք սովոր էինք եւ եւք մեր հատուածական ածուին «մեծ»-երը միայն մեծարելու դիտարկութեան:



1966-ի դպրոցական վերամուտին էր: Այնճարի մէջ հանդիսութիւն մը կազմակերպուեցաւ տղոց գիշերօթիկ-նոցի բակին մէջ: Բակը լեփ-լեցուն էր հանդիսականներով: Օրուան բանախօսն էր մուսալեռցի-այնճարցի Եղուարդ Պոյաճեանը (ծն. 1915): Կ'ըսէին, թէ ան ալ գիւղագիր մըն է: Ես արտասանեցի Համաստեղի՝ Հայաստանի լեռներուն սրն-գահարի երգը՝ «Ես չոպանն եմ Հայաստանի լեռներուն, չոպանն ու պան, գանգ ու զնգան լեռներուն»: Պոյաճեանը ոտքի էր, ամպի ունի ետին: Վերէն կը նայէր ինձի: Թուաց, որ գաճաճի տեղ դրաւ գիւս այդ հսկան, ո՛չ ժպիտ ուներ, ո՛չ ալ դժգոհութեան նշան, կամ ես այդքան վարէն չկրցայ նկատել:

Հանդիսութեան կարծ ժամանակ մը ետք, 13 Հոկտեմբեր 1966-ին, մահացաւ Եղուարդ Պոյաճեանը: Համաստեղի կրտսեր գրչակիցը մահացաւ: Թաղումին գացինք: Այնճարի գերեզմանատունն էր: Հոն ըսին՝ սա Անդրանիկ Ծառուկեանն է, սա Պօղոս Սևապեանը, սա... սա...: Փնտռեցինք Պոյաճեանի «Տոմար տարագրի» գիրքը. շատեր կարդացին. հոն կը պատմէր մուսալեռցիներու այս նոր կայքին՝ Այնճարի ծննդոցին մասին, լուցկիի տուփի նմանող տուներ, համանման ցեխոտ փողոցներ, ճախճախուտներ, մահտարածամ, հայրենաբաղձութիւն, լուտանք եւ օղի...: Սեղոյք կը մտածէր. «Հայաստանի իշխանաւորը Սատանան ըլլար, անոր պիտի պաղտաւոր, որ ընդունի գինք եւ տանի երկիր»:

Բոլորս ակնդէտ կը սպասէինք Համաստեղի յոբելեանական եզրափակիչ հանդիսութեան, որ յառաջիկային տեղի պիտի ունենար Պէյրութի մէջ: Համաստեղ ներկայ պիտի ըլլար: Պէյրութ հասնէր՝ Այնճար չէլէր, չէր ըլլար:

Բայց ատկէ առաջ կարգը Նիւ-Եորքին էր: 26 Նոյեմբերին 1966, Համաստեղ ներկայ էր, բեմ հրաւիրուեցաւ ու հոն ալ ինկաւ իր կրտսեր գրչակիցին ետեւէն: Բեմին վրայ: Յոբելեարը բեմին վրայ մահացաւ:

Լիբանանի մէջ ծրագրուած եզրափակիչ հանդիսութիւնը տեղի ունեցաւ առանց յոբելեարին, 12 Փետրուար 1967-ին:

Մեր ժողովուրդը ուզած էր իր կենդանութեան պատուել մեծ հեղինակը:

10.- Պարոն Արուքեանը

Կաշիէ գունաթափ պայուսակը անութիւն տակ սեղմած, միւս թեւն ալ տիկնոջ տուած՝ կը մտնէր դպրոցի դարպասէն ներս: Պարոն Սամուէլ Արուքեան ըսին: Ատիս Ապապայէն եկած էին, ինք՝ նախկին տնօրէն, ուսուցչապետ, թարգմանիչ, գրող, վեց թէ եօթ լեզուներու գիտակ: Մեզի աշխարհագրութիւն եւ ընդհանուր ազգաց պատմութիւն կը դասաւանդէր, ուրիշ դասարանի մը՝ հանրահաշիւ, ուրիշ տեղ մը՝ բնագիտութիւն. ամենագետ մարդ էր:

Աշակերտը ամէն տեղ նոյնն է: Պարոն Արուքեանը դասանիւթէն դուրս հանելու համար կը բաւէր ըսել՝ Մեծ Եղեռն, Ամերիկա, կուսակցութիւն: Մէկն ու մէկը: Մենք գոց գիտէինք իր անցեալը, մանաւանդ Մեծ Եղեռնի տարիներուն ապրած իր ողիսականը, քիւրտներուն քով իր ծառայութիւնը, հայրութեան վերադառնալու իր խիզախութիւնը: Յետագային երբ կարդացինք Արամ Հայկազի «Չորս Տարի Զիւրտիստանի Լեռներուն Մէջ» գիրքը՝ հերոսներուն մէջ պարոն Արուքեանը կը փնտռէինք:

– Ինձի չհարցուցին ինչ յարանուանութեան ու կուսակցութեան պատկանիլս, գիւս խոշտանագեցին իմ հայ ըլլալու համար, – կ'ըսէր:

Գիտէինք նաեւ ամերիկաբնակ իր երկու գաւակներուն մասին, բայց Պարոն Արուքեան ո՛չ գաւակներուն պէտք կը գգար, ո՛չ ալ անոնց տոյարներուն. Ամերիկան իրեն համար գերեզման մըն էր, գերեզման, կը հասկնա՞ք...

Թուրքիոյ նուրջ

ԷՐՏՈՂԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ՈՐ 31 ՄԱՐՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՁԻՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ԻՐԵՆ ՀԱՄԱՐ

Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան յայտարարած է, որ տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւնները, որոնք երկրէն ներս տեղի պիտի ունենան 31 Մարտին, գործող օրէնսդրութեամբ վերջինը պիտի ըլլան իրեն համար:

«Ինձի համար այս աւարտ է: Այս ընտրութիւնները իմ վերջին ընտրութիւններն են օրէնքով տրուած լիազօրութիւններու շրջագիծէն ներս», vesti.ru-ի հաղորդմամբ, անոր խօսքերը մէջբերած են պատկերասփիւռի տեղական կայաններ:



Էրտողան ըսած է, որ այս ընտրութիւններուն արդիւնքներով գործերը կը փոխանցուին անոնց, որոնք կը ղեկավարեն երկիրը իրմէ ետք:

Թուրքիոյ մէջ սիւնի բան 30 սնշ ձերբակալուած է ԱՆԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՆՈՒ ԿԱՍԿԱԾՈՎ

Թուրքիոյ արեւմտեան Սաքարիա նահանգին մէջ ձերբակալուած է 33 անձ՝ 31 Մարտին կայանալիք տեղական ընտրութիւններու նախաշեմին ահաբեկչութիւններ նախապատրաստելու կասկածով:



«Արմէն փրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին X-ի միջրոպայական կատարած գրառումով յայտարարած է Թուրքիոյ ներքին գործոց նախարար Ալի Յերիքեան՝ մանրամասնելով, որ յատուկ գործողութեան արդիւնքով ձերբակալուած անձինք ՏԱՀԵԾ ահաբեկչական խմբաւորման հետ կապուած ըլլալու յանցանքով ձերբակալուած են:

– Առանց հայերէնի՝ ինչ հայ, – կը բացագանչէր: Տիկնի Տիգրանուհին գբօսանքին կը մօտենար մեզի, կը դիմէր ըսելով. – Երուանդ, Յակոբ, ա՛ղուորներս, դասարանին մէջ Պարոն Արուքեանին Եղեռնի, Ամերիկայի եւ կուսակցութիւններու մասին հարցում չընէք, գիտէք ինչ կ'ըլլայ...

– Առանց հայերէնի՝ ինչ հայ, – կը բացագանչէր: Տիկնի Տիգրանուհին գբօսանքին կը մօտենար մեզի, կը դիմէր ըսելով. – Երուանդ, Յակոբ, ա՛ղուորներս, դասարանին մէջ Պարոն Արուքեանին Եղեռնի, Ամերիկայի եւ կուսակցութիւններու մասին հարցում չընէք, գիտէք ինչ կ'ըլլայ...

Ու կը մեղքնայինք իրեշտակի նմանող այդ կնոջ՝ Տիկնի Տիգրանուհին: Վիճակը վատթարացաւ: Պաշտօնի վրայ պահել հնարաւոր չէր: Պէյրութի մէջ Օթէլ Լիւք տեղափոխեցին: Յատուկ բաժին տրամադրուած էր իրենց կեցութեան համար: Երուանդ ու ես պարբերաբար կ'այցելէինք իրենց: Պարոն Արուքեան նարտիի սեղանին առջեւ նստած կ'ըլլար ու քարտըրը հոս ու հոն կը տեղափոխէր, որո՞ւ հետ կը խաղար, ինչ քայլ կ'առնէր՝ գիտէ՞ր արդեօք: Չէր ճանչնար մեզ: Կը նստէինք դիմացը ու հերթաբար մեր քարն ալ կը տեղափոխէինք իրմէ ետք: Լռութիւն: Քարտըրը շրխկոցէն բացի:

Վաչէն ու Վահէն ամէն օր կապի մէջ էին իրենց մօր հետ: Կ'ուզէին, որ վայրկեան առաջ պապան ու մաման իրենց քով ըլլային:

Թուրքերը իրենց լրումին հասան. մեկնումի պահն էր:

Կաշիէ գունաթափ պայուսակը անութիւն տակ սեղմած, միւս թեւն ալ տիկնոջ տուած՝ Պարոն Արուքեանը Պէյրութի միջազգային օդակայան հասաւ, բարձրացաւ օդանաւին սանդղակէն, ու հոն, դուռին առջեւ, պահ մը միտքը պայծառացաւ, զգաց ու հասկցաւ, որ ասիկա՝ այս դուռը, Ամերիկայի դուռն է, որ դաւադրաբար գինք ներս կը քաշէ:

Ամերիկայի դուռը:

Մեր՝ աշակերտներու մէջ տարածուեցաւ գրոյց մը, թէ Պարոն Արուքեան յանկարծամահ եղաւ. հոն կաշիէ գունաթափ պայուսակը անութիւն տակ սեղմած, միւս թեւն ալ տիկնոջ տուած ինկաւ. հոն՝ Ամերիկայի դուռին մէջ:

Երեւի կ'ուզէինք, որ այդպիսի աւարտ ունենայ այս հայուն աւանդաւէտը:

Պրիմալկես

ՊԱՆԾՈՂՈՒԹԻՒՆ



Մարուշ Երամեան

Պահքը մեր քաղաքին կարելու իրադարձություններն մեկն է, աւելի կարելու քան Կաղանդը, Չատիկը, Լոյսիկը Ս. Սարգիսի երեք օրերուն ծոմապահութիւնն ու անոր յաջորդող Լախաճաշի «շնդալից» հաւաքները: Թերեւս այս կարելու լինելը կու գայ այն իրողութենէն, որ հալէպահայ կիներն ու աղջիկները, որոնց մեծամասնութիւնը չէր աշխատեր այն օրերուն, պահեցողութեան քառասուն երկար օրերու ընթացքին ընկելը բան կը գտնեն եւ ատով իսկ կ'ունենան շատ ինքնագոհ վիճակ մը:

- Պա՞ք ես, - կը հարցնեն իրարու ամեն հանդիպումի:
- Այո:
- Ես ալ:
- Կամ
- Պա՞ք ես:
- Ոչ:

-Քա ինչո՞ւ ... չէ՛, ես ալ, քոյրերս ալ, եղբորս կիսն ալ, մամաս, կեսուրս, մօրքուրներս ... չէ՛, չբռնել չ'ըլլար ... մենք ամեն տարի կը բռնենք ... չէ՛ ...

Ատոր անմիջապէս կը յաջորդեն խոհագիրերու փոխանակումը կամ «շատ համով էր, բայց չափերը չառի» պոչով սուտը:

Տանտիկինը հպարտօրէն կը ցուցադրէ իր աշխատանքը, ինքզինք զըրկելով «պոչով սուտ»-ի չքմեղանքէն: Եւ կը սկսի իրարանցումը.

- Թուղթ-մատիտ կու տա՞ս, գրենք:
- Ես մատիտ ունիմ, միայն թուղթի կտոր մը ...
- Աման քա, եղբորս կիսն ալ ըրեր էր ասկէ. մօրը դրացին եկեր է Պէրուլթէն, անկէ առեր էր չափը. բայց իրը քիչ մը աւելի փափուկ էր. դուն կ'երեւի թահինը քիչ դրեր ես ...

Պէտք է խոստովանիլ, որ Զալէպի կիները կրնան իրապէ՛ս ճոխ սեղան մը բանալ միայն պահեցողութեան յատուկ ճաշատեսակներով եւ քաղցրաւենիքով: Զգիտցողները ճաշի դասընթացներուն կը հետեւին, կամ իրարմէ կը սորվին: Իսկ հարուստները փորձելով կը սորվին, եփել-թափելով չէ, այլ՝ եփելով եւ թափելով, մինչեւ թափելը մոռցուի եւ մնայ միայն եփելը:

Վերջերս հանդիպեցայ պահեցողութեան յատուկ խոհագիրքի մը, հրատարակուած Պէրուլթի Զամագայիին կողմէ, ուր նախ կը բացատրուի պահեցողութիւնը, ապա քանի մը աղօթքներ կը ներկայացուին, որոնցմէ յետոյ կու գան աւելի քան հարիւր խոհագրեր:

Այդ խոհագիրերուն մէջ չէր սակայն, որ ծանօթացայ «հըրվըշտա»-ին. խարբերոցի բարեկամուհի մը պատմեց, խարբերոցի վերագրելով հայսերիզի (մաքարոնի) այս տեսակը.

- Շատ փոքր էի. կը յիշեմ որ մայրս հըրվըշտա կը շինէր. կը հաւաքուէին մեծ-մայրս եւ մօրքուրներս, խմոր կը շաղէին, կը բանային ու յետոյ երկար-երկար երիզներ կը կտրէին անկէ: Այդ երիզները լուացքի թելերուն կը փռէին, որ չորնան:
- Արեւի՞ն տակ, - կ'ընդմիջեմ զինք:
- Պահ մը կը մտածէ, յետոյ.
- Չեմ յիշեր, - կ'ըսէ, - կը փռէին, կը չորցնէին եւ յետոյ ձմռան համար պահ կը դնէին:
- Չըրվըշտա, - կ'ըսեմ բարձրաձայն, արդեօք անչափութիւն ունի՞ր Զալէպի ոռշտեյէին հետ:
- Կրնայ ըլլալ, - կ'ըսէ, - ատոր պէս բան մըն է: Մայրս մածուկով հեղուկ մը կը շինէր ու հըրվըշտան մէջը կը դնէր, մինչեւ եփելով կակուղնար:

Որքա՞ն տոհմիկ, աւանդական ճաշատեսակներ կորսնցուցեր ենք մեր Գաղթին եւ թափառումներուն ընթացքին, եւ որքան տարբերակներ որդեգրեր ենք այն վայրերէն, ուր հասեր եւ կայք հաստատեր ենք: Ղափաման մոռցուած մնացեր էր երգի մը մէջ - բարեբախտաբար վերջերս այս կերակրատեսակը գարթօնքի շրջան մը կ'ապրի, թէեւ կը շարունակուի ճաշին անուկը գործածուիլ որպէս ձմեռուան դդումի անուն - իսկ հըրվըշտան յիշող այսօր գրեթէ չկայ:

Այս առումով Զալէպի Զամագայիինը ութսունական թուականներուն օգտաշատ ձեռնարկներու՝ «Տոհմիկ Օր»-երու շարք մը սկսեր էր. խրախճանքի երեկոներ էին ասուք, որոնց ընթացքին կ'երգուէին գաւառի մը երգերը, կը պատմուէին անոր անեքթոները, կը կարդացուէին բարբերն ու սովորութիւնները եւ իւրաքանչիւր տիկնոջ կը տրուէր խմորատիպ փոքրիկ գրքոյկ մը, այդ գաւառին ճաշատեսակները նկարագրող խոհագրեր պարունակող:

Չեմ գիտեր թէ այդ գրքոյկները օգտագործուեցա՞ն, կիներն գոնէ մաս մը փորձե՞ց այդ տոհմիկ ճաշերէն պատրաստել: Ո՞ւր մնացին այդ գրքոյկները այսօր, երբ տարբեր մը ծայր առած է դարաւոր Զալէպէն, ուր հայերս գրեթէ դար մը ապրեցանք: Որեւէ մէկը մտածե՞ց իր հետ տանիլ այդ փոքրիկ գրքոյկը, որուն մէջ սեղմուած է մեր գաւառներէն մէկն ու մէկը իր խոհանոցով ...

-Չարիւր տարի ետք միայն հայկական խոհանոցն ու հայկական պարերը պիտի մնան, - օր մը ըսաւ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, հեռատեսիլէն ցուցադրուած իր մէկ հարցազրոյցին ընթացքին:

Բայց մեր խոհանոցն ալ սկսեր է տժգունիլ, ձուլուելով շուրջի ժողովուրդներու խոհանոցներուն հետ: Ո՞վ պիտի մտածէ վերականգնել մեր գաւառներու խոհանոցները:

Միջինարեւելեան տարբեր խոհանոցները՝ յունական, լիբանանեան, սուրիական, թրքական եւ այլն, սկսեր են մեծ չափով, Լոյսիկ անուններով իրար նմանիլ՝ ցացիքի-ճաճըխ, մուսաքքա, տոլմատե-տոլմա, հերիսա եւ այլն:

Ինծի կը թուի սակայն, որ մեր պահեցողութեան ճաշերն են, որոնց մէջ գրեթէ անխաթար կը պահուի հայկական խոհանոցը, ինչպէս վանայ մշոշ, լոբով (լուբիայով) մշոշ, հովիւի ճաշ, խաշիլ, լոբախաշու ծիրանաչրով եւ այլն:

Չայկական ճաշատեսակներուն եւ անոնց կապուած աւանդութիւններու մասնագետ մըն է արդէն հայաստանցի դարձած անճարցի Սոնիա Թաշճեանը, որուն կայքէջերն ու գիրքերը իրապէ՛ս մեծ հաճոյքով կը կարդացուին եւ կը կիրարկուին անշուշտ:

Իր «Չայկական Աւանդական խոհանոց»



կայքէջին մէջ ո՛չ միայն խոհագրեր կը գտնենք, բայց մանաւանդ կը ծանօթանանք հայկական աւանդութիւններու եւ սովորութիւններու, ինչպէս օրինակ ընկոյզին տրամադրուած էջը, ուր Թաշճեան կը գրէ.

«Չինէն ի վեր, աւանդական խոհանոցի ճաշերուն համ ու հոտ եւ սննդառարութիւն տուող իւրիւն կը փոխարինեն տարբեր տեսակի ձեթերը (ծիթախիւղ, արեւածաղիկի ձեթ, կորեկի ձեթ, քունջիթի ձեթ կամ թահին, եւ այլն), հոունտերը կամ սերմերը (քունջութ, կանեփ, արեւածաղիկի կուտ, դդմակուտ եւ այլն), ընկուզեղէնը (ընկոյզ, պիստակ, ծիրանակուտ, կաղին, նուշ եւ այլն)»:

«Որպէս հարուստ իւղատու բնամթերք ընկոյզը իր իւրայատուկ տեղն ունի մեր առօրեային մէջ: Չայթերէի բառապաշարին մէջ ընկոյզ բառի տարբեր անուանումներն ու արտայայտման նրբերանգները ենթադրել կու տան, որ դեռեւս վաղնջական ժամանակներէն ընկոյզը տարածուած մթերք է մեր կենցաղին՝ բժշկութեան ու սնունդին մէջ. ի դէպ, ան կ'օգտագործուի նաեւ կանաչ վիճակով, ինչպէս կ'օգտագործուին միջնապատերը եւ ինքնին ընկոյզը»:

Այս առիթով Թաշճեան կը մէքերէ Աճառեանի բառարանէն անուած հետեւեալ բաժինը.

«Ընկոյզ, ճղոպուր, գուզ, պոպուկ: Նաեւ բորոլ (խոշոր), կակալ (պատեանի հետ միասին), կաղաղ (կանաչ թաղանթով), կրկիտ կամ քցիկ (միջուկը դժուար ելլող), փոլիխ (դիւրաբեկ կեղեւով), չունուզ (մէջը փուճ), փառակ կամ տապակ (կէս ընկոյզ), պճեղ (միջուկին քառորդը), ձնձում (ամբողջական միջուկ), քիստ (միջնապատը), մաշկ (միջուկին թաղանթը), խեճեպ (կեղեւը), ընկուզ մէջ (միջուկը), արդար ընկոյզ (երբ թարմ է), կթուն (թարմի միջուկը), եւ այլն: Ընկոյզի նմանողութեամբ հնդկընկոյզ (cocoanut) եւ մշկընկոյզ (nutmeg) բառերը ստեղծուած են, ներմուծուած այս երկու մթերքներուն համար»:

Սպառիչ տեղեկութիւններ տալէ ետք, կը գտնենք նաեւ խոհագրեր, ուր ընկոյզը օգտագործուած է, ընկերացած անունովը ա՛յն գաւառներուն, ուրկէ եկած են այդ ճաշատեսակները.

- Օրինակ.
- Ընկոյզի հաց / Ակն. Թարմ հացը թաթխել մանրուած ընկոյզին մէջ, տաքցնել, ապա վրան մեղր ծորեցնելով մատուցել:
- Մեղրով պտօրեկ / Չէթուն. Մանրած ընկոյզն ու մեղրը խառնել, քսել կտրտած լաւաշի վրայ, ոլորել եւ տապակել իւրիւն մէջ:
- Զալաճոշ / Ակն. Մածուկը գարնել ալիւրով եւ հալկիթով, ապա եռացնել: Վրան լեցնել սոխարած, մանրուած ընկոյզ ու փոշի անանուխ: Մատուցել չոր հացով կամ լաւաշով:
- Աւելուկով ապուր / Սասուն. Աւելուկը (կամ այլ բանջար մը) խաշել, ջրքամել: Խաշել ոսպը, խառնել աւելուկը, աղացած ընկոյզ, սխտոր եւ համեմունք:
- Ընկոյզով բազրկանի / Մուսալեռ. Աղալ ընկոյզը, խառնել մանրած սոխ ու սխտոր, համեմունք. մատուցել վրան ձեթ լեցնելով, որպէս թաթխան:

- Թոփիկ. Միջինքին յատուկ կոլոլակ. Պատեան խմորի համար՝ թըրջած սիսեռը աղալ, շաղել 1 - 2 խաշած գետնախնձորով. միջուկի համար՝ մանրած սոխ, չամիչ, ընկոյզ, համեմունք: Խմորի գնդիկը տարածել լաթի վրայ, լցնել միջուկով, փակել, լաթը կապել ծրարի նման եւ խաշել աղաջուրի մէջ:

- Խարփուխաշ / Տիգրանակերտ. Աղացած ընկոյզը խառնել եռացող աղաջուրին, աւելցնել սխտոր ու համեմունք, մատուցել չոր լաւաշով:

- Շնեթեկ / Արցախ. Խաշել ու ջրքամել ծնեթեկը եւ մատուցել ընկոյզի թացանով (աղացած ընկոյզ, սխտոր, սոխ, համեմունք, քացախ, եռացած ջուր):

Կ'անդրադառնաք, չէ՛, թէ իրապէս որքա՞ն տեղեկութիւն կը կրեն իրենց մէջ մեր հայկական ճաշերը, այդպիսով դառնալով մեր կարգ մը աւանդութիւններուն թէեւ անսովոր, բայց ապահով շտեմարանը:

ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՅ ՏԵՐ ԶՕՐ

Տևորինությունը՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի, Ուրբաթ, 8 Մարտ 2024-ին, երկրչփ. Չաւեն Պարտաքննական պատուիրակութեամբ այցելեց Տեր Զօր, ուր շերմապէս դիմաւորուեցան Տեր Զօրի ազգայիններ Սուրեն եւ Գեորգ Վարդանեաններուն կողմէ:

Այցելութեան նպատակն էր իրազեկ դառնալ Տեր Զօրի Սրբոց Նահատակաց Յուշահամալիրի ներկայ իրավիճակին եւ վերանորոգութեան նախապատրաստական աշխատանքները կատարել:

Թեմի պատուիրակութիւնը Տեր Զօրի մէջ այցելեց նաեւ Տեր Զօրի նահանգապետ դատաւոր Ֆատէլ Նաճարին, որուն հետ խորհրդակցեցաւ Յուշահամալիրի վերանորոգութեան կարելորութեան մասին:

Կիրակի, 10 Մարտ 2024-ին, երկրչփ. Չաւեն Պարտաքննական հանդիպում ունեցաւ Ազգ. Վարչութեան հետ, գլխաւորութեամբ առաջնորդ սրբազան հօր: Հանդիպման ընթացքին, ան զեկոյց ներկայացուց Տեր Զօր կատարած իր այցելութեան եւ նախապատրաստական աշխատանքներուն մասին:



ԴՈԿՏ. ՆՈՐԱ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐՈՒ ՆԱՄԱՇԽԱՐՆԱՅԻՆ ԽՈՐՆՈՒՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՐՅԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈԽ ԱՏԵՆԱՊԵՏ

Չորս օրերէ ի վեր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) կերտուածողին (Ժընեւ, Չուիցերիա) մէջ տեղի կ'ունենայ Խորհուրդի միջազգային հարցերու յանձնաժողովի հանդիպումը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ յանձնաժողովի իբրեւ լիիրաւ անդամ իր գործուն մասնակցութիւնը կը բերէ դոկտ. Նորա Պայրագտարեան: Յայտնեց, որ այս յանձնաժողովը ԵՀԽ-ի կարելորագոյն կառույցներէն մէկն է, որ կը զբաղի քաղաքական, ընկերային, տնտեսական եւ միջազգային հարցերով:



Յանձնաժողովի այսօրուան նիստին փոխատենապետուհի ընտրուեցաւ դոկտ. Նորա Պայրագտարեան, որ վերջին տասը տարիներուն անդամ էր Նոյն խորհուրդին եւ կարելոր դերակատարութիւն ունեցած էր անոր աշխատանքներուն մէջ: Յանձնաժողովի ատենապետն է դոկտ. Մաթիոս Ծորձ, որ մօտէն ծանօթ է Վեհափառ Հայրապետին եւ ընդհանուր քարտուղարն է Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդին:

Դոկտ. Նորա Պայրագտարեան ժընեւի մէջ յանձնաժողովի նիստին դասախօսութիւն մը տուաւ «Global Governance: Challenges and Emerging Geopolitical Trends» սկիզբի շուրջ:

Յայտնեց, որ դոկտ. Պայրագտարեան անդամ է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովին եւ քաղաքական գիտութեան դասախօս՝ Պէրլոթի ամերիկեան, ինչպէս նաեւ լիբանանեան պետական համալսարաններուն մէջ:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՕՐՆՈՒԹԻՒՆԸ ՏՈՒՄԷ «ԱՐՅԱԽԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՆՊԱՆՄԱՆ ԿԵԴՐՈՆ»-Ի ԾՐԱԳԻՐԻՆ

Արցախի մշակութային ժառանգութեան պահպանումը եւ փոխանցումը Նոր սերունդներուն՝ մեզմէ իւրաքանչիւրին սըրբազան առաքելութիւնն է: Նոյն նպատակին համար գոյացած է «Արցախեան Մշակոյթի Պահպանման Կեդրոն» հասարակական կազմակերպութիւնը:

Արդարեւ, Արցախի մէջ թէ՛ Արցախեան դուրս մեր կոչումն է պահել արցախեան հոգեւոր եւ ազգային մշակութային հարուստ ժառանգութիւնը: Ուստի, յիշեալ կեդրոնին կողմէ կազմակերպուած է համազգային դրամահաւաք՝ այս նպատակին համար, որ սկիզբ առաւ 20 Փետրուար 2024-ին եւ արդիւնքնէ:



ՔԵՍԱՊ՝ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵՆԵՆ ՏԱՍԸ ՏԱՐԻ ԵՏՔ



Սեան Ա. Մանճիկեան

Արդէն տասը տարի... Քեսապի տեղահանութենէն, կամ ինչպէս քեսապահայութիւնը կ'անուանէ՝ 21 Մարտ 2024-ի «Միաճրլէք»-էն տասը տարի ետք, այսօր, արդեօք սպիացաւ տեղահանութեան բացած խորունկ վերքը:

Պահ մը յետադարձ ակնարկով մը անդրադառնանք քեսապահայերու վերադարձէն ետք վերականգնումի, ամէն ինչ իր հունին վերադարձնելու, տեղահանութեան ստեղծած հոգեկան եւ նիւթական կորուստը շրջանցելու եւ դարմանելու յամառ ճիգին ու ջանքին:

Տեղահանութեան պարտադրած գորշ պայմանները իւրաքանչիւր քեսապցիի համար, որ տարիքի ալ պատկանի ան, առանձին տագնապ ու կսկիծ յառաջացուցին:



Անոնք, որոնք հասած էին իրենց կեանքի վերջալոյսին՝ «իտտը դրուշէոյը» (կեանքի վերջին հանգրուանին), իրենց անխոնջ աշխատանքով կեանքի երկար տարիներու եւ երիտասարդութեան տուրքը վճարած էին՝ վասն ապահով ու խաղաղ կեանքի: Այդ սերունդը իր ու իր գաւակներուն կեանքը նիւթապէս ապահոված էր, սակայն այդ բոլորը փոշիացան, ակնթարթով մը ամէն ինչ շոգիացաւ: Բայց երբ երբ «երկար» ամիսներ ետք վերադարձան Քեսապ, իրենց տան երդիքները կանգուն գտան: Ու թէեւ անոնք կոտորած սիրտն ու ահաւոր տխրութիւնը կարելի էր դարմանել, սակայն ուրախ էին գէթ իրենց կերտած բոյնը կանգուն տեսնելով: Անոնք վերադարձէն ետք աշխուժութեամբ եւ երիտասարդական եռանդով փորձեցին իրենց տուններուն եւ պարտէզներուն աւերակներուն մէջ գտնել ապրուած օրերու, տարիներու ու մինչեւ հասունութեան տարիքին հասած կեանքի յուշերը, թէկուզ անոնցմէ պատահիկ մը, վաւերական նկար մը, դպրոցական վկայական մը, իրենց պատկերէն ժառանգ մնացած ժամացոյց մը կամ «պաստօն» մը (զաւագան, որ ծերերը կը գործածեն իբրեւ յենարան): Եթէ նման բան գտնէին, Նոյնիսկ թշուառ վիճակի մէջ՝ «բլբսած» (բորբոսած) եւ գունատ նկարներ, մէլանի հետքն իսկ կորսնցուցած վկայականներ... կը հրճուէին: Տուններուն ստուգումը կատարելէ ետք, անոնք ուղղուեցան իրենց պարտէզները ու... ծառեր դեղելու սարքեր, պարտէզի մկրատներ, որսի հրացաններ, բահ ու բրիչներ եւ դէռ ինչէ՛ր ու ինչէ՛ր գողցուած գտան. ասոնք կորուստը կեանքի կորուստին համազօր էր... սակայն այդ ալ շրջանցելով ճիգ չխնայեցին կորուստէ փրկելու այն ինչ որ կարելի էր: Իրենց ատամները ուժգնութեամբ սեղմելով փորձեցին յոյս ներշնչել իրենց շրջապատին, հաւատալով եւ իրենց գաւակներուն ու թոռներուն հաւատացնելով, որ փապուղիի վերջաւորութեան անպայման կրկին լոյս պիտի ծագի:

Երեք սերունդի կեանքի օրերն ու ապագան հազիւ միս ու ոսկոր կապած էին, աշխատանքով ու ճակտի քրտիկներով անոնք հազիւ ընտանիքին բարեկեցիկ կեանք մը ապահովելու յոյսով համակուած էին, երբ տեղահանութեան հետեւանքով ամէն բան սկիզբէն կառուցելու անելի կացութեան մատուցեցան կրկին: Անոնք մէկ կողմէ կը փորձէին ոտքի կանգնիլ, կորսուած երազներն ու յոյսերը վերագտնել, միւս կողմէ իրենց գաւակներուն տեր ըլլալ, որպէսզի գոյատեւեն: Երեք ամիս առաջ ինքնաբաւ էին, այսօր կարիքաւոր են:

Ինչ փոյթ սակայն. անոնք կրկնապատկեցին իրենց աշխատանքը, իրենց տուն ու պարտէզ վերադարձը բաւարար համարեցին, թէկուզ տունները աւերուած, իսկ պարտէզները լքուած էին, այդուամենայնիւ իրենց անկարելին կարելի դարձուցին ու գտնուած սարքերով, ունեցածով գոհանալով կրկին աշխատանքի լծուեցան, հաւատալով որ կեանքի գարունները անհամար են ու յաջորդ գարնան պարտէզներուն ծառերը կրկին կը ծաղկին, բերք կու տան, անոնք գոյն-գոյն ծաղիկները իրենք կեանքին շունչ կու տան, յոյս կը ներշնչեն կրկին, հետզհետէ ամէն ինչ իր հունին կը վերադառնայ... առողջութիւնն էր կարելորդ:

Քեսապահայութեան ապագան պայծառացնող, կերտող, գունազարդող եւ եկեղեցի-դպրոց-միութիւն հզօր սիւները կազմող խոստմնալից երիտասարդութիւնը 2014-ի տեղահանութեան ցիր ու ցան դարձաւ: Եթէ տարբեր սերունդներ կորսնցուցին իրենց պարտէզներուն սարքերը կամ տան կահաւորումը, այլ խօսքով ընտանիքին նիւթական հարստութիւնը, երիտասարդութիւնը կորսնցուց իր երազը:

Քեսապահայութիւնը տեղահանութեան ստեղծած պայմաններուն բերումով կորսնցուց իր ամենամեծ հարստութեան կարելոր մէկ մասը՝ իր երիտասարդութիւնը: Թէեւ անոնք բռնած գաղթի ճամբան արդարացուած էր՝ ուսման, ապահովութեան փնտռումի, զինուորական ծառայութենէ զերծ մնալու եւ կեանքի հանգիստ պայմաններ ապահովելու առումով, սակայն օտարութիւնը, իրենց ծնողներով մտահոգուիլն ու ապագայի փնտ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՉԵՆ ԸՆԵՐ...»

Սկիզբ՝ էջ 4

Նացնել բոլոր նախապայմանները: Տնտեսության եւ ընկերային հարցերու տազնապաները ունին իրենց ողբերգական պատմությունը: Ուրբանիոյ պատերազմին հետեւանքով, պահ մը Հայաստան «ապաստանած» դրամագլուխներ, ըստ մասնագետ տնտեսագետներու, արդէն իսկ սկսան եւ «արտագաղթել», ինչպէս կ'ընեն ապրուստի դժուարութիւններու մատուցած հայրորդիներ, Հայաստան բռնագաղթած արցախցիներէն մաս մը: Ապրուստի սղութիւնն ու հարկային կամայականութիւնները այլ ցուցանիշներ են ընկերային-տնտեսական դժուարութիւններու ծանրացման: Հոս ալ կարելի է արձանագրել քանի մը «մանր» յաւելում, ինչպէս փոխադրածախսերու յաւելումը, երեւանի քաղաքամէջի կանգառներուն՝ կարմիր գիծերու սակերուն բարձրացումը եւ հոս-հոն «բարեփոխման ծրագիրներու» համար բնակարաններու քանդումները (մոռցուած յաւելումներ կ'ուզէք պայթումի եւ արկածներու հետեւանք՝ քանդումներն ու աղետները): Տնտեսության ոլորտին մէջ, երկրին ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ նահանջի մէջ է: Օր մը կը լսես, որ ձկնորսները իրենց տարտը կու լան, ուրիշ օր՝ այգեգործները, այս կամ այն պտուղը արտադրողներ, երրորդ օր մը՝ ջուրի սակաւութենէ տառապողներ, ուրիշ օր՝ երկրագործական արտադրութիւնը շուկայ հասցնելու անկարող մնացողներ, մէջ ընդ մէջ ալ՝ Վրաստանի սահմանայանին փակումներուն զոհ գացողներ:

Արտաքին քաղաքականութեան՝ յարաբերական կալուածը ունի իր բազմերես ողբերգութիւնները: Արեւմուտքի հետ իբրեւ թէ նոր յարաբերութիւններ, կամուրջներ հաստատելու համար, հարուածներ կը հասնին նախկին բարեկամութիւններուն, կամ կրաւորականութիւն կը ցուցաբերուի այլ դրացիներու նկատմամբ: Կարծեք թէ Հայաստանը երբ իր լաւ յարաբերութիւններ կը մշակէ արեւմտեան երկիրներու հետ, մոռացութեան կը տրուի, որ անցեալին, երկու աշխարհներուն հետ ալ կային գործակցական եւ որոշ չափով հաւասարակըշուած յարաբերութիւններ (չենք անտեսեր հակադրութիւններու սասուկացումը, սակայն երբ ուրիշներ հին խաղը կը յարմարցնեն նոր կացութիւններուն...): Անցեալին վերագրուած ստաբիլութիւններուն եւ անհիմն հաստատումներուն ծիրին մէջ կրնանք արձանագրել նաեւ... Այժմ Աթաբայի համաձայնութեան «գիւտը»: Իսկ եթէ հոս ալ ուզենք փնտռել «մանր յաւելումներ», կրնանք գըտնել առատութեամբ, զոնէ յիշենք Թուրքիոյ երկրաշարժէն աղետեալներուն շուտափոյթ օգնութիւն հասցնելը (արցախցիք իսկ նման փութկոտ աջակցութեան չեն արժանանար, մինչեւ իսկ Հայաստանի քաղաքացիութենէն կը զրկուին...),

Ուրբանիոյ ժողովուրդին օժանդակութիւն հասցնելը, հիմա ալ... Կագայի աղետեալներուն օգնութիւն տրամադրելու պատրաստակամութիւնը: Սիւալ չիսակցուիք աղետեալին օգնելը առաքինութիւն է, Հայաստանը հարուածող աղետներուն ատեն՝ շատեր օգնութեան ձեռք երկարած են, սակայն երբ երեւանի իշխանաւորներուն կողմէ նման քայլերու ետին կ'երեւին թելադրողներուն կոտորները, «կարմիր շորերով ցուցնու դիմաց քալելու» ա'յլապէս անմիտ պատկերը իր իրական իմաստը կը ստանայ:

Դիւանագիտական անճարակութիւնն ու հանրութիւնը խաբուութիւններով զբաղեցնելու հնարքներն ալ անսպառ են: Մէկ կողմէ, եւ ամբողջապէս դիտարկութեամբ, թուրքն ու ազերին կը հռչակուին ցեղասպան, պատերազմի սպառնալիք տեղացնող, Հայաստանի հողերը գրաւելու պատրաստողներ, իսկ յաջորդ վայրկեանին, նոյն այդ սպառնալիքները արձակողներուն հետ սիրալի'ր բանակցութեան կը նստին Պրիւքէի կամ Միւնիխի մէջ, իր կամակատարի տրամադրութեամբ, Արեւմուտքէն հասնող ազդանշաններու թելադրանքով (որոնք, ինչ գարմանք, համահունչ են թուրք-ազերիական ծրագիրներուն):

Եւ որպէսզի հանրութիւնը «զբաղումի նիւթէ» չզրկուի, կայ «մանրադրամներու սակարան», ուր մերթ ընդ մերթ կը բեմադրուին... դայրոցներու ծորակներու եւ խաղավայրերու խեղկատակութիւններ, փողոցներու երկայնքին նոր ծառերու տնկում, ճամբաներու՝ քանի մը ամիս դիմացող կուպրապատում, նախարարի, փոխ նախարարի պաշտօնազրկում, յատուկ դեսպանի հրաժարական, խորհրդարանի նախագահի եղբոր կնոջ ու գործակիցներու հետապնդում եւ արդարացում. եւ ասոնք կը ծառայեցուն եական հարցերու լուսանցքայնացման, մոռացութեան տրուելուն (շարքը դո՛ւն շարունակէ, սիրելի՛ ընթերցող): Փաստօրէն, ո՞վ կը յիշէ, թէ մեծ քանակութեամբ թմրեցուցիչ «բռնուած» եր, քննութիւն բացուած, յետոյ... մոռցուած՝ շատ ու շատ, եւ անելի՛ ծանրակշիռ օրինակացութիւններու, ողբերգութիւններու պէս: ԸՐԻՆ, ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ

Ինչ որ արձանագրեցին վերը, զրպարտութիւն, յերիւրածոյ վերագրումներ չեն, այլ ՓԱՍՏ են ու արձանագրուած՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԸԾՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Յանկը շարժ երկար է, ամեն օր նորերով կը հարցտանայ անարգել եւ անպատկառ քայլերով:

Երբ նման քայլերու մասին անցեալին ահագանգեր ինչեցին բանիմացներու եւ հայրենասերներու կողմէ, իշխանութեան համակիրներ ըսին. «Մի՛ չափազանցեք, ճանրմ: Ասոնք հայրենասեր են, հայրենիքի բարելաւումը կը ցանկան, անանկ բան չեն ըներ»: Հիմա, 3-4 տարի ետք, վերի փաստերուն պէս բազմաթիւ այլ փաստեր կան, որոնք սկսած են խելամուտութեան բերել իշխանա-

ւորներուն բազմաթիւ «սիրահարները»:

Այսօ՛ր ալ ահագանգերը կը կրկնուին ու կ'ահագանան. այսօ՛ր ալ «ասոնք վաղը այս-այն կործանարար քայլը պիտի առնեն» ըսողներուն՝ կարգ մը սիրահարներ (որոնք շարքին կան բազում կամակատարներ, շահակիցներ) կը փորձեն տարածել այն «տեսութիւնը», թէ ընդդիմադիրները կը չափազանցեն: Փաստը, սակայն, կը մնայ փաստ: Այս արարածները յիշեալ բոլորը ըրի՛ն: Այո՛, ըրի՛ն, վրան ալ քանի մը գաւաթ պաղ ջուր խմեցին (երբեմն ալ «Հայաստանի կարմիր գիւնի» երգելով գիւնովցան): Վաղն ալ պիտի ընէ՛ն այն՝ որմէ կը զգուշացնեն բանիմացներ, հայրենասերներ: Այո՛, որովհետեւ ուրիշ բան չեն գիտեր ընել, որովհետեւ... ուրիշ բանի համար չեն բերուած իշխանութեան ղեկին:

Իսկ թէ ինչե՛ր կան անոնք «ճաշացուցակին» վրայ, բոլորն ալ թելադրուած՝ իրենց դրսեցի տերերէն (եւ այդ տերերուն շարքին են Անգարան ու Պաքու)՝ կը կարօտի նոր սիւնակի մը: Յաջորդի:

ՔԵՍԱՊ...

Սկիզբ՝ էջ 8

նտուքը կը տանջեցին ու ցարդ կը տանջեն գիրեք: Անելին. մեծ պարապութիւնն ու մտահոգութիւնը կը կրծէ եւթիւնը իրենց ծնողներուն, որոնք ոչ միայն իրենց գաւակները, այլեւ իրենց հարազատներէն շատ-շատերը ճամբու դրած էին դէպի օտար ափեր:

Այսօր տեղահանութենէն տասը տարի ետք, քեսապցին ըստ իր կարելիութիւններուն վերականգնած է ինքզինք, տուն, պարտեզ, եկեղեցի, դպրոց եւ միութիւններ, շարունակելով առկայ պայմաններուն մէջ տուկալ ու լոյսի նշոյլներ ստեղծել անձամբ իսկ՝ հակառակ երկրի տնտեսութեան, թագածախիին, երկրաշարժին եւ սղաճին ստեղծած ծանր պայմաններուն: Անշուշտ Սուրիական Հայրենիքին 2011-էն ծայր առած պատերազմին յառաջացուցած այլազան դժուարութիւններէն անմասն չէր կրնար մնալ քեսապցին, հետեւաբար կը դիմագրաւէր ելեկտրականութեան, կենցաղային կարիքներ ապահովելու դժուարութիւններ եւս, նամանաւնդ հողագործութեան աշխատանքի պայ-

մաններուն դժուարացումով: Պարտանկութիւն, գործաւոր ապահովելու, խնձորի ֆալի սղաճը անոր բերքի եկամուտին նժարը ծախսերու նժարէն շատ անելի վեր կը պահէ: Ծախսերը, համեմատաբար եկամուտին, ծանրակշիռ կը մնան... Վերոյիշեալ դժուարութիւններուն հետ մէկտեղ քեսապցիայութիւնը այսօր կը շարունակէ հաւատալ, որ իր կեանքը շարունակելի-բոլորելու ամենայարմար վայրը քեսապն է, կառչած մնալով իր պապերուն հողին, բարքերուն եւ սովորութիւններուն:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա...

Սկիզբ՝ էջ 8

րը պիտի յայտարարուին 23 Մարտ 2024-ին:

Յանուն ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, համագային դրամահաւաքին ողջոյնի խօսք փոխանցեց Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Իր խօսքին մէջ, առաջին հերթին, Շահան Արք. ողջունեց Արցախի մշակութային ժառանգութիւնը պահպանելու կոչուած յիշեալ կեդրոնին հաստատման նախաձեռնութիւնը եւ շէշտեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ եղած է ու պիտի մնայ Արցախի ու արցախահայութեան կողքին: Անդրադառնալով յատկապէս մշակութային մարզին՝ սրբազան հայրը ըսաւ. «Անթիլիասական հրատարակութիւններէն մինչեւ մասնաւոր համագումարներու կազմակերպումը, մեր երիտասարդութիւնն ու մեր ժողովուրդը հաղորդ պահեցինք համահայկական եւ արցախեան արժէքներուն՝ ինքնութեան եւ պատկանելիութեան գիտակցութեան խորացումով»:

Իր խօսքին աւարտին, Շահան Արք. ընդգծեց կարեւորութիւնը «Արցախեան Մշակոյթի Պահպանման Կեդրոն»-ին, որովհետեւ մշակոյթը մեր ինքնութիւնը կերտող կարեւորագոյն հիմքերէն է, որուն իւրացման եւ անոր հետ նոյնացման ընթացքով մենք պիտի կարենանք պահել Արցախը՝ Արցախի սահմաններէն անդին, մեր նիւթաբարոյական աջակցութեամբ գործնապէս պիտի նպաստենք Արցախի մշակոյթին վերակենդանացումին եւ վերածաղկումին:

«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Լեւոն Շառոյեանի



«ՀԵՐԿ ԵՒ ԲԵՐՔ»
(Հրադարական և վերլուծական էջեր)

գիրքը: Հայտ, 2024:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Նախանձելի է ձեր առողջապահական վիճակը: Կենսուրախ եւ ուժեղ էք: Զիչ մը համբերեցէ՛ք, որպէսզի ձեր նպատակները յաջողութեամբ իրականացնէք:

Ցուլ
Մարգարեքի հետեւեցէ՛ք, որպէսզի հիւանդութիւններէն խուսափիք: Բարեկամի մը հետ հաճելի պահեր պիտի ունենաք:

Երկուորեակ
Չափազանց աշխատասեր ու գործունէայ էք: Այդ իսկ պատճառով բոլորին գովասանքին պիտի արժանանաք:

Խեցգետին
Բաւական յոգնած էք եւ հանգիստի կարիքը ունիք: Հաճելի օդափոխութիւն մը մեծապէս պիտի կազդուրէ ձեզ:

Առիծ
Բարկացկոտ էք, բայց՝ բարի: Առողջապահական խնդիրներ պիտի ունենաք, սակայն մի՛ յուսահատիք:

Կոյս
Կարգապահ եւ հետեւողական նկարագրի տեր էք: Ձեր ընկերները ձեր աջակցութեան կարիքը ունին: Օգնեցէ՛ք անոնց:

Կշիռք
Վատ սովորութիւններէն հրաժարեցէ՛ք, որպէսզի ձեր առողջութիւնը բարելաւուի: Հեռաւոր երկրէն մեծ նուէր մը պիտի ստանաք:

Կարիճ
Անակնկալ լուր մը պիտի ստանաք եւ ուրախութենէն թռչիք: Դժուարութիւններէն ետք ձեր արեւը կրկին պիտի շողայ: Մի՛ մտահոգուիք:

Աղեղնաւոր
Անհրաժեշտ է լաւապէս քնանալ, որպէսզի աւելի եռանդուն ըլլաք: Կարճ ճամբորդութիւն մը նախատեսած էք բնութեան գիրկը: Պատրաստուեցէ՛ք:

Այծեղջիւր
Բարձր տրամադրութիւն պիտի պարգեւէք ձեր շուրջիներուն: Նոր գործի մը առաջարկը պիտի ընդունիք եւ յաջողութիւն նուաճէք:

Ջրիս
Ձեր նիւթական վիճակը պիտի բարելաւուի: Մարդիկ պիտի գնահատեն ձեր ցուցաբերած ազնուութիւնը իրենց նկատմամբ:

Ձուկ
Բարդ խնդիրները պիտի լուծուին եւ դուք վերջապէս պիտի հանգստանաք: Հեռաւոր բարեկամ մը մեծապէս պիտի աջակցի ձեզի:



«ՕՍՔԱՐ»-Ի ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒ ԾՐՋԱԳԻԾԻՆ ՄԷՋ «ՕՊԸՆՆԱՅՄԸՐ» 7 ՄՐՅԱՆԱԿ ՆՈՒԱՃԵՅ

Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցաւ ամերիկեան շարժանկարի ակադեմիայի «Օսքար» շարժանկարներու մրցանակի յանձնումի 96-րդ արարողութիւնը:

Զրի ստո՞ք ըր Նոլանի «Օպընհայմըր» տրաման, որ առաջադրուած էր 13 անուանակարգերուն մէջ, նուաճեց 7 մրցանակ, այդ կարգին՝ «Լաւագոյն ֆիլմ», «Լաւագոյն բեմադրիչ», «Լաւագոյն դերասան», «Լաւագոյն մոնթաժ», «Երկրորդ դերի լաւագոյն դերասան» եւ «Լաւագոյն նկարահանման աշխատանք» անուանակարգերուն մէջ: Ֆիլմը «աթոմային ռումբի հայր» Ռոպերթ Օպընհայմըրի կեանքի եւ աթոմային ռումբի առաջին փորձարկումներու մասին է: «Լաւագոյն դերասանուհի» անուանակարգին մէջ յաղթեց Էմմա Սթոունը («Խեղճուկրակները» Poor Things) ֆիլմին համար:



«Լաւագոյն հետաքրքրական բեմադրութիւն» անուանակարգին մէջ մրցանակ շահեցաւ «Անկման անաթոմիա» (Anatomy of a Fall) ֆիլմը: «Լաւագոյն վաւերագրական ֆիլմ» անուանակարգին մէջ յաղթեց «20 Օր Մարիուպոլի Մէջ»-ը (20 Days in Mariupol), իսկ «Լաւագոյն կենսունակ ֆիլմ» անուանակարգին մէջ՝ «Տիւան Եւ Ձկնակուլը» (Kimitachi wa Dou Ikiru ka) ստեղծագործութիւնը:

ՀԱԼԵՊՈՂԱՅՈՒՅԻՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ



Լիբանանի մէջ տեղի ունեցած Miss Tourism Continental 2024 մրցումին, Հայաստանի կողմէ մասնակցած է հալէպահայ Մարիա Ղարիպեան: Մրցումին մասնակցած են տարբեր երկիրներէ ներկայացուցիչներ: Մարիան նուաճեց «Երեկոյեան Չգեստներու Լաւագոյն Ներկայացնող»-ի մրցանակը:

ՄԵԾ ՊԱՏԻՔԻ ՅԱՏՈՒԿ ՈՒՆԵՍՈՒՆԵՐ

ՇԻՐԻԿՈՎ ԿԱՍ ԹԱՅԻՆՈՎ ՀԱՅ

- Բաղադրութիւն**
3 գաւաթ ալիւր
Զանի մը դգալ ձեթ
Զիչ մը աղ
1 գաւաթ գաղջ ջուր
Մէկ թէյի դգալ թթիւ մոր
Մէկ գաւաթ շաքար
3 - 4 ապուրի դգալ գաղջ ջուր
Մէկ գաւաթ շիրիկ
Չարդարանքի համար՝ փոշի շաքար եւ կասիա



- Պատրաստութիւն**
Նախ մէկ ապուրի դգալ թթիւ մորը, շաքարը եւ 3-4 դգալ գաղջ ջուրը խառնել եւ տաք տեղ մը դնել մօտ 10 վայրկեան մինչեւ որ փրփրի:
Այս միջոցին ալիւրը մաղել, աւելցնել աղ եւ ձեթ ու շփելով խառնել, ապա դնել փրփրած թթիւ մորը եւ խառնել, ապա աւելցնել մէկ գաւաթ գաղջ ջուրը եւ շաղել խմորը: Փոս ամանի մը յատակը ձեթ քսել եւ խմորը դնել այդ ամանին մէջ եւ խմորին երեսին ալ ձեթ քսել, ծածկել մաքուր լաթով մը եւ դնել տաք տեղ մը մօտ մէկ ժամ մինչեւ որ թթուի: Մէկ ժամ ետք խմորէն գունդեր շինել եւ ծածկել լաթով մը, վրան ալ նայլընէ տոպրակ մը դնել որ խմորը չքարանայ: Բառորդ ժամ հանգչեցնելէն ետք, այդ գունդերը բանալ եւ վրան դգալով շիրիկ տարածել մինչեւ ծայրերէն մօտ կէս սմ՝ ներս, վրան ցանել շաքար՝ ծածկելով շիրիկը, տեղ-տեղ ցանել նաեւ փոշի կասիա: Ոլորել խմորը եւ յետոյ խղունջածեւ դարձնել, ծայրը փակցնել եւ գլանով տափակցնել, դնել ձեթ քսուած ափսեի մը մէջ եւ եփել նախապէս տաքցած 180 աստիճան փուռի մէջ մինչեւ որ կարմրի:
Բարի ախորժակ:

Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ Պասքեթի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, ՅՍԸՄ-ի պասքեթի տղոց խումբը հետաքրքրական յաղթանակ մը արձանագրելով 62 - 56 արդիւնքով պարտութեան մատնեց Դամասկոսէն Ժամանած ալ-Սաուրա խումբը: Մրցումին յաղթանակի հաւանականութիւնը փոխն ի փոխ փոխանցուեցաւ կազմերուն միջեւ, սակայն վերջին վայրկեաններուն, ՅՍԸՄ-ի մարզիկներուն զգոյշ խաղարկութիւնը յաղթանակի արժանացուց խումբը:



-Սուրիոյ հաւաքականի խաղացող Այիամ Ուստ առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը բերաւ Սպանիոյ Լա-Լիգայի Զատէշ խումբին հետ մրցումին եւ յաջողեցաւ ներկայանալ բարձրորակ խաղարկութեամբ: Ուստ յաջողեցաւ իր խիտ պաշտպանողականութեամբ արգելք հանդիսանալ մրցակիցին յարձակումներուն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ԿԵՐԱՆՈՒՄԵՑ ՅԱՐՁԱՆԱԿՆԵՐ

Սպանիոյ առաջնութեան 28-րդ փուլի մրցումներուն, առաջատար Ռեալ Մատրիտը հիւրը դարձաւ Սելթա Վիկոյին. իտալացի Գարլո Անշելոթիի գլխաւորած խումբը 4 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց մրցակիցը: 21-րդ վայրկեանին, արագիւցի յարձակող Վինիսիուս Ժունիորը նշանակեց Ռեալի առաջին կողմ ու հանդիպումը շարունակուեցաւ մինչեւ 80-րդ վայրկեան, երբ Ռեալի գերմանացի պաշտպան Անթոնիո Ռուտիքերի հարուածած գնդակով Սելթաֆիկոյի սպանացի դարպասապահ Վիսենտե Գուայտանըանակեց Ռեալի երկրորդ կողմը. 88-րդ վայրկեանին, Վինիսիուսի ուժեղ փոխանցումէն ետք ինքնակոլի հեղինակ դարձաւ նաեւ սպանացի պաշտպան Գարլոս Տոմիսկետ, որմէ երկու վայրկեան ետք հանդիպումը աւարտեցաւ Ռեալի չորրորդ կողմ: Աւելցնենք, որ Ռեալ 69 կէտով կը գլխաւորէ մրցաշարքի աղիւսակը, 7 կէտի տարբերութեամբ իրեն կը յաջորդէ Ժիրոնան:



ԼԻԿԵՐՓՈՒԼ - ՍԻԹԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ԶԱՄԱՐ ԱՄԻՐՏԵՑԱՎ

Անգլիոյ առաջնութեան 28-րդ փուլի մրցումներուն, Լիվըրփուլ իր դաշտին վրայ հիւրընկալեց ախոյեան Մանչեսթըր Սիթին: Զանդիպումը իր աւարտին հասաւ 1 - 1 հաւասարութեամբ: 23-րդ վայրկեանին, Մանչեսթըր Սիթիի անգլիացի պաշտպան Ճոն Սթուկ կատարեց կոլերու բացումը, իսկ 50-րդ վայրկեանին, Լիվըրփուլի կիսապաշտպան Ալեքս Մաք Ալիսթըր տուգանային հարուածով նշանակեց հաւասարութեան կողմը: Լիվերփուլ 64 կէտով կը գրաւէ աղիւսակի երկրորդ դիրքը, յաջորդելով Արսենալին, որ նոյն կէտերով կը գրաւէ առաջին դիրքը:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 479)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոջեան-Պողիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2						■						
3			■				■			■		
4			■									
5											■	
6		■		■			■					
7		■			■						■	
8						■						
9			■				■					
10												■
11	■		■		■					■		
12				■								

Յորհոնական

- Սաստիկ ատելութեամբ բռնկած: Զայ գուսան:
- Զայկական դաշտ: Զովուական գիր:
- Ոչ հասուն: 490: Զակառակ՝ անձնական դերանուն:
- Անձնական դերանուն: Բռնաշխատութիւն: Զակառակ՝ 260:
- Շաղկապաւոր յարադրութիւն:
- 5060: Տառի մը անունը:
- Տարի: Զակառակ՝ 440:
- Խառնակ վիճակ: Նապաստակի տեսակ:
- Շաղկապ: Յառաջ:
- Խելագար:
- Բայց: Զակառակ՝ շաղկապ:
- Վերջը: Զոչակաւոր:

Ուղղահայեաց

- Ասացուածքը կ'ըսէ. «Չունենալուդ համար մի՛ ափսոսար, այլ..... փորձէ ունենալ»:
- Իգական օտար անուն: Վախճան, վերջ:
- Գրական գործ: Զակառակ՝ արժեք:
- Ձայնակիչ: Գեղեցիկ տերեւներով բարձր ծառ:
- Ամօթահար: Զակառակ՝ անձնական դերանուն:
- Այն աւետարանիչը, որ մասնագիտութեամբ բժիշկ էր: Զայկական ծագում ունեցող օդանաւի մակնիշ:
- Աղբիւր: Տառի մը դրացիները: Լսե՛:
- 1600: Սիւսանաթի ծննդավայրը:
- Տիրան Զրաքեանի 23 տարեկանին գրած գրական ստեղծագործութիւնը, որ կը նկատուի իր հոգեկան յուշագրութիւնը:
- Զակառակ՝ տառի մը անունը: Ուսանաւորի տողերուն նմանանչին վերջաւորութիւնը, որ կը կրկնուի երկու կամ աւելի անգամներ:
- Սուր: Զակառակ՝ հարցական դերանուն:
- Զարկադրուած: Յարաբերական դերանուն:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 478)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ա	գ	ի	ն	■	լ	ա	ն	դ	ա	կ
2	ա	ա	ր	ա	ն	■	ա	ւ	ա	ր	տ	
3	մ	ա	■	ա	ր	փ	■	ն	ր	■	■	
4	բ	ն	ա	գ	դ	■	■	հ	ա	յ	ր	
5	■	է	■	է	ն	■	■	ծ	ւ	■	մ	
6	ա	ի	■	կ	ւ	կ	■	ծ	■	■	ը	
7	■	է	չ	■	■	■	■	ա	ր	■	է	
8	ա	լ	ա	գ	է	ա	գ	■	■	ի	ր	
9	մ	■	■	ա	ր	ն	օ	■	տ	ա	կ	
10	ն	վ	■	հ	ա	■	■	■	ր	■	ի	
11	լ	ա	լ	■	ն	է	■	■	ի	■	է	
12	■	ի	ա	ն	դ	ա	դ	■	ա	ա	ն	ր

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 18/3 10° 19°	Երեքշաբթի 19/3 9° 16°	Չորեքշաբթի 20/3 8° 20°	Հինգշաբթի 21/3 7° 17°	Ուրբաթ 22/3 8° 20°	Շաբաթ 23/3 9° 21°	Կիրակի 24/3 9° 23°
---	---	--	---	--	---	--

ՀԱՄԱԳՎԱՅԻՆ «ՉՈՒԽՐԹՆՈՅ»...

Մկրտչի 12 1

«Մեր Սիրելի Երեւան» եւ « Առաջին Սիրոյ Երգ », Առնո Պապաչանեան, Walzer No.2, Shostakovich, Historia De Un Amor, Carlos Almaran, «Խմբերգային Շարք», Թաթուլ Ալթունեան, «Գարուն Երեւան», Արամ Խաչատուրեան եւ վերջապէս «Հայաստան», Արմէն Սմբատեան:

Վերջըներ երգին խումբին միացան Համագայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի «Սարդարապատ» պարախումբի պարողներ:

Կարգ մը երգերու երգչախումբային մշակումը կատարած էր մայեսթրա Գայիանէ Սիմոնեանը:

Շ ա հ ե կ ա ն Է ր օրուան հանդիսավարին եւ Խմբավարին կողմէ երգերու շարժառիթին կամ պատմութեան անդրադարձը, որ յաւելեալ հետաքրքրութիւն ստեղծեց հանդիսատեսին մօտ եւ իրագեկ դարձուց զինք: Հետաքրքրական էր օրինակ իմանալ, որ Տիմիթի Շոսթաքովիչի Walzer No. 2 վալսը գրուած է Համաշխարհային Բ. պատերազմի օրերուն եւ հեղինակն իսկ երեւան չէ հասած իր այդ աշխատանքը, ապա պատերազմի պայմաններուն տակ աշխատանքը կորսուած է, հետագային յայտնուած է ԱՄՆ-ի մէջ եւ այնտեղ ալ երեւան եկած, որ Շոսթաքովիչ նման ստեղծագործութիւն մը ժառանգ թողած է երաժշտասեր հանրութեան: Ստեղծագործութիւնը մեծ ընդունելութիւն կը գտնէ մինչեւ մեր օրերը:



Գնահատանքի արժանի էր երգչախումբի անդամներուն նուիրական աշխատանքը, յատկապէս խմբավարին ամուսնոյն, վաստակաւոր «Չուարթնոց»-ական Վարդգէս Տերեանի խումբին մաս կազմելն ու բեմ բարձրանալը, հակառակ իր առողջապահական անկայուն վիճակին: Համերգին հրաւիրուած էր նաեւ Վարդգէսը բուժող բժիշկը, «Բալիմէ» հիւանդանոցի տնօրէն տոքթ. Ուսամա Ատիպը, որուն ներկայութեան համար յատ-



կապէս շնորհակալութիւն յայտնեց մայեսթրա Գայիանէ Սիմոնեան-Տերեանը:

Օրուան եզրափակիչ խօսքը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, որ շնորհաւորեց խմբավարը, դաշնակահարն ու երգչախումբի անդամները, ինչպէս նաեւ միաւորի վարչութիւնը՝ այս հոգեպարար համերգին առիթով:

Մակար սրբազան յայտնեց, որ երկրի ծանր այս օրերուն «Չուարթնոց»-ականները լուսաւորեցին մեր կեանքը երաժշտական գոհարներով եւ լիցքաւորեցին մեր ներաշխարհը հայ եւ օտար դասական ու ժողովրդական երգերով, որոնք բարձր գնահատանքի արժանի են:

Սրբազան հայրը գնահատելով մայեսթրա Գայիանէ Սիմոնեան-Տերեանն ու անոր ամուսինը, որ առողջապահական հարց ունենալով մեկտեղ մասնակցեցաւ ելոյթին, շնորհակալութիւն յայտնեց նաեւ «Բալիմէ» հիւանդանոցի տնօրէն տոքթ. Ուսամա Ատիպին՝ իր հոգատար վերաբերմունքին եւ ներկայութեան համար:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ Ա. ԿԱՐԳԻ ՀԱՆՂԻՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՊԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝ ՀՄԸՄ-ի Հայեպի Մասնաճիւղի Վարչութեան եւ Սկաւուտ Խորհուրդին, ներկայութեամբ՝ Հոգեշնորհ Տ. Արմէն Աղբ. Գալաճեանին, ՀՄԸՄ-ի հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Մաշտոց Ա. Բախանայ



Արապաթեանին, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Աւետիս Տերվիշեանին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային վարչութեան եւ Սկաւուտ Խորհուրդին ու խմբապետութեան եւ համակիրներու հոծ բազմութեան, Շաբաթ 9 Մարտ 2024-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին ներս տեղի ունեցաւ Սկաւուտական Ա. Կարգի հանդիսութիւն եւ երդման արարողութիւն, ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 105-ամեակի սերունդին:

Հանդիսութիւնը սկսաւ Սուրիոյ Հայաստանի Հանրապետութիւններուն քայլերգներով, կատարողութեամբ մասնաճիւղի փողերախումբին: Բացման խօսքով հանդէս եկաւ Հրակ Փայասեանը, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ինչպէս նաեւ անդրադարձաւ ՀՄԸՄ-ի առաքելութեան եւ նպատակին, շեշտելով, որ այսօրուան վկայական ստացող քոյրերն ու եղբայրները պիտի ըլլան վաղուան Հինդիեանը, Զրիսեանը եւ Յակոբեանը:



Հանդիսութեան ընթացքին ներկայացուցան սկաւուտական մարզանք եւ գեղարուեստական յայտագիր, ինչպէս նաեւ՝ դասընթացքին յայտագիրը ներկայացնող տեսերիզի ցուցադրութիւն, ապա հերթականութեամբ տեղի ունեցաւ Բ. կարգի վկայականաց բաշխում եւ Վարիչ առաջնորդ աստիճանի տուցութիւն, ձեռամբ՝ Հայեպի Մասնաճիւղի Խմբապետ Յովիկ Հապէշեանի:

Ապա, բեմ հրաւիրուեցան Ա. կարգի թեկնածու քոյրերն ու եղբայրները, Հոգեշնորհ Հայր Սուրբը եւ Մասնաճիւղի Սկաւուտ Խորհուրդի ատենապետ Յարութ Փաթանեանը՝ հովանաւորելու երդման արարողութիւնը, որմէ ետք ստացան համապատասխան վկայականն ու պեճը: Սկաւուտ Խորհուրդին հրաւերով յետ մահու Փաթիլ Չոլաքեանին վկայականը ստանձնեց հանգուցեալին մայրը, ապա տեղի ունեցաւ յուշանուէրներու բաշխում դասընթացքին ներկայացող դասախօսներուն:

Սկաւուտ Խորհուրդին խօսքը ուղղեց մասնաճիւղի խմբապետ Յովիկ Հապէշեան, որ իր կարգին շնորհաւորեց վկայական ստացող քոյրերն ու եղբայրները եւ անդրադարձաւ, թէ անոնք ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 105-ամեակի սերունդն են, որոնք իրենց ստացած այս կարգով պիտի դառնան վաղուան ղեկավարներն ու խմբապետները:

Աւարտին, Հոգեշնորհ Տ. Արմէն Աղբ. Գալաճեան ուղղեց իր սրտի խօսքը եւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանին շնորհաւորանքը՝ վկայական եւ աստիճան ստացող քոյրերուն եւ եղբայրներուն, ապա հանդիսութիւնը «Պահպանիչ» աղօթքով եւ «Յառաջ Նահատակ» քայլերգով փակուեցաւ: